

## Ոչ պաշտոնական թարգմանություն

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՎԵՍԵԼՈՎՆ ԵՎ ԱՅԼՈՔ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ

*(Applications nos. 23200/10, 24009/07 and 556/10)*

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2 Հոկտեմբերի 2012թ.

**Վերջնական**

*02/01/2013*

*Այս վճիռը ուժի մեջ է մտել՝ վերջնական է, համաձայն Կոնվենցիայի 44  
Հոդվածի § 2-ի: Ենթակա է խմբագրական փոփոխությունների*





Վեսելովն և այլոք ընդդեմ Ռուսաստանի գործով

Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը (առաջին բաժանմունք), որպես Պալատ նիստ գումարելով հետևյալ կազմով՝

Նախագահ՝ Նինա Վաջիչ,

Դատավորներ՝

Անատոլի Կովլեր,

Պիր Լորենզեն ,

Էլիզաբեթ Սեյներ,

Խանլար Հաջին,

Լինուս-Ալեքսանդր Սիցիլիանու,

Էրիկ Մոսե ,

և Բաժանմունքի քարտուղար՝ Սորեն Նիելսենը,

2012 թվականի սեպտեմբերի 11-ի դրնփակ դատական քննարկումներից հետո վերջում նշված օրը կայացրեց հետևյալ վճիռը.

#### ՎԱՐՈՒՅԹԸ

1. Գործը հարուցվել է Ռուսաստանի Դաշնության դեմ երեք դիմումի (Հ- 23200/10, 24009/07 և 556/1041088/05) հիման վրա, որը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի հիման վրա Ռուսաստանի երեք քաղաքացու՝ Պրն. Վիկտոր Սերգեյի Վեսելովի, Մաքսիմ Բոլխովի Ջոլտուխինի և Իգոր Վյաչեսլավի Դրուժինինի («դիմումատուներ») կողմից Դատարանին է ներկայացվել 2010թ. ապրիլի 8-ին, 2007թ. մայիսի 3-ին և 2009թ. նոյեմբերի 12-ին:

2. Դիմումատուներին ներկայացնում էին Տիկին Օ.Օ. Միխայլովան՝ փաստաբան, որը փաստաբանական գործունեություն է իրականացնում Մոսկվայում, Պրն. Գ.Բ. Գաբրիաիանովը, որը փաստաբանական գործունեություն է իրականացնում Եկատերինբուրգում և Պրն. Վ. Գ. Տուչինը, որը փաստաբանական գործունեություն է իրականացնում Մոսկվայում: Ռուսաստանի կառավարությունը (Կառավարություն) ներկայացնում էր նրա ներկայացուցիչը Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանում Պրն Գ. Մատյուշկինը:

1. Դիմումատուներից յուրաքանչյուրը պնդում էր, որ իրենք դատապարտվել են թմրանյութերի հետ կապված իրավախախտումների համար, որոնք հրահրվել են ոստիկանության կողմից Կոնվենցիայի 6 - րդ հոդվածի խախտմամբ:

2. 2010թ. նոյեմբերի 25-ին դիմումատուները հաղորդակցվել են Կառավարության հետ: Պալատը որոշում է կայացրել դիմումի ըստ էության քննությունն անցկացնել դրա ընդունելիության հարցի քննության հետ միաժամանակ (Հոդված 29 1):

#### ՓԱՍՏԵՐԸ

##### I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան Ներկայացուցչության օժանդակությամբ:

3. Դիմումատուներից յուրաքանչյուրը հանդիսացել է ոստիկանության կողմից 1995թ. օգոստոսի 12-ի (հա. 144-FZ) Օպերատիվ հետախուզական գործունեության մասին օրենքի 7 և 8 բաժինների համաձայն թմրամիջոցների վերահսկելի գնման ձևով անցկացված օպերատիվ հետախուզական միջոցառման թիրախ: Այդ գործողությունների անցկացման հետևանքով հետագայում նրանք դատապարտել են թմրամիջոցների վաճառքի համար:

4. Յուրաքանչյուր առանձին քրեական գործի փաստերը կողմերի ներկայացված ձևով ամփոփված են ստորև: Դիմումատուները համաձայն չեն եղել Կառավարության հետ ստորև ներկայացված վերահսկելի գնմանը հանգեցրած պատճառների և պայմանների հետ, ուստի երկու տարբերակներն էլ ներկայացվում են: Ինչ վերաբերվում է գաղտնի գործողության փաստական մանրամասներին, ապա դրանք չեն վիճարկվել: Մասնավորապես, ընդունված պրակտիկա է, որ դիմումատուները գիտակցաբար ձեռք են բերում թմրանյութեր դրանց վերահսկելի գնման ընթացքում:

### Ա. Պրն. Վեսելովի դիմումը

5. Դիմումատուն ծնվել է 1989թ. և ապրում է Մոսկվայում: Իր ձեռքակալման պահին նա հանդիսացել է մենեջմենթի քոլեջի երրորդ կուրսի ուսանող: Ներկայումս ազատազրկման ձևով իր պատիժն է կրում Քրեակատարողական գաղութում: 6. Կառավարության համաձայն, 2009թ. մայիսի 19-ին Պրն. X-ը կամավոր ներկայացել է ոստիկանություն և տեղեկացրել, որ երկու անձ, “Վիկտորը”(դիմումատուն) և “Ռուսլանը” հաշիշ են վաճառում գրամը 600 Ռուսական Ռուբլով (RUB):

7. Համաձայն Դիմումատուի, X-ը թմրամոլ է, նախկինում դատապարտված թմրամիջոցներ ապօրինի պահելու համար, նաև եղել է ոստիկանական իրազեկիչ, նախկինում մասնակցել է թմրամիջոցների վերահսկելի գնման: Ի նպաստ այս մեղադրանքների, Դիմումատուն ներկայացրել է X-ի դեմ կայացված դատավճիռ, ինչպես նաև չորս այլ, գործի հետ կապ չունեցող դատաքնությունների պատճեններ, որտեղ X-ը մասնակցել է որպես մեղադրյալից կանեփի, հաշիշի և հերոինի վերահսկելի գնում կատարող:

8. Մահմանված պրակտիկայի համաձայն, որը հաստատված է նաև պաշտոնական արձանագրություններով, ոստիկանությունը հրահանգել է կատարել վերահսկելի գնում և X-ից ստանալով համապատասխան տեղեկատվություն՝ անմիջապես անցել դրա կատարմանը: Հրահանգում նշվել է դիմումատուի անունը և այն, որ նա կասկածվում է գրամը 600 ռուսական ռուբլով (RUB) հաշիշ վաճառելու մեջ: X-ը զանգահարել է “Ռուսլանին” և ասել, որ ցանկանում է հաշիշ գնել: Ոստիկանները ներկա են եղել X-ի և “Ռուսլանի” խոսակցության պահին, սակայն խոսակցությունը չի ձայնագրվել: X-ին տրվել է 3,000 ռուբլի (RUB), դրամանիշները պատճենահանվել են: X-ը հանդիպել է “Ռուսլանին” նույն գիշեր ավելի ուշ և նրանք միասին հանդիպել են դիմումատուին, որը նրանցից վերցրել է 1,200 ռուբլի և գնացել թմրանյութ գնելու: Դիմումատուն ավելի ուշ ձեռքակալվել է, և նրա մոտ հայտնաբերվել է դրամանիշեր, որոնք համապատասխանել են կրկնօրինակներին: Վերահսկվող գնման ընթացքում X-ն իր բջջային հեռախոսը միացրած է պահել ոստիկանության հեռախոսահամարի վրա, որը հնարավորություն է տվել լսելու նրանց խոսակցությունը: Այդ խոսակցությունը չի ձայնագրվել: Ո՛չ “Ռուսլանը” և ո՛չ էլ դիմումատուին թմրանյութ վաճառողը չեն ձեռքակալվել և

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:

քրեական հետապնդման չեն ենթարկվել հնարավոր է այն հիմքով, որ նրանց ինքնությունը չի հաջողվել պարզել:

9. Դատաքննության ընթացքում X-ը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը վերահսկելի գնումից երկու շաբաթ առաջ հանդիպել է դիմումատուին և “Ռուսլանին” տեղական սուպերմարկետում: Խոսակցության ընթացքում դիմումատուն պատմել է, որ կարող է իր համար գնել որոշ քանակությամբ հաշիշ: “Ռուսլանը” նրան տվել է իր հեռախոսահամարը: Դրանից հետո X-ն ինքնակամ տեղեկացրել է այդ մասին ոստիկանությանը և համաձայնվել մասնակցել վերահսկելի գնմանը: Նա ցուցմունքում նշել է, որ նախկինում երբեք դիմումատուից թմրանյութ չի գնել: Պաշտպանի կողմից X-ի խաչաձև հարցաքննության ընթացքում դատավորն արգելել է նրան հարցեր տալ իր նախկին դատվածության և այն մասին, թե արդյոք ինքը թմրամիջոց օգտագործող է եղել: Դատավորը նաև մերժել է վերջինիս միջնորդությունն այն մասին, որ որպես ապացույց ընդունվի X-ի նախկինում թմրամիջոցների վերահսկելի գնմանը մասնակցելու վերաբերյալ դատավճիռը:

10. Ոստիկանը, որը նախաձեռնել և իրականացրել էր վերահսկվող գնումը, դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ մինչև X-ից տեղեկատվություն ստանալը, իրենք չեն ճանաչել դիմումատուին որպես թմրամիջոց վաճառող: Նրանք վերահաստատեցին վերահսկելի գնման մանրամասները:

11. Դատաքննության ժամանակ դիմումատուն ընդունել է իր մեղքը “Ռուսլանին” թմրամիջոց գնելուն օգնելու համար, սակայն պատճառաբանել է, որ դա եղել ոստիկանության կողմից հրահրման հետևանքով: Նա նաև նշել է, որ ինքը և “Ռուսլանը” ժամանակ առ ժամանակ հաշիշ են ծխել, սակայն ինքը երբեք ոչ մեկի չի վաճառել կամ մատակարարել: Վերահսկելի գնման ժամանակ առաջին դեպքն է եղել, որ ինքը համաձայնել է օգնելու, որ “Ռուսլանը”, կամ որևիցե այլ մեկը ձեռք բերի թմրանյութ, և որ ինքը դա արել է միայն այն պատճառով, որ վերջինս համառորեն պնդել է:

12. “Ռուսլան” անունով անձը չի կանչվել դատարան խաչաձև հարցաքննության նպատակով, հնարավոր է այն պատճառով, որ նախաքննություն կատարող մարմինները չեն կարողացել պարզել նրա ինքնությունը:

13. 2009 թ. սեպտեմբերի 15-ին Մոսկվայի Նիկուլինսկ շրջանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել թմրանյութերի ապօրինի վաճառքի փորձի համար և դատապարտել չորս և կես տարվա ազատազրկման: Դատարանը պատշաճ գնահատական չի տվել դիմումատուի կողմից ներկայացված սադրանքի վերաբերյալ մեղադրանքին:

14. Դիմումատուն բողոքարկել է: Նա պնդել է սադրանքների առումով մեղադրանքը, նշելով *inter alia*, որ X –ը եղել ոստիկանության իրազեկիչ և բողոքարկել առաջին ատյանի դատարանի որոշումը համապատասխան ապացույցները որպես ապացույց ընդունելը մերժելու մասին: Նա նաև նշել է, որ ոստիկանությունը որևիցե այլ տեղեկատվության չի տիրապետել այն մասին, որ ինքն անցյալում երբևիցե վաճառել է թմրանյութ: Նա նաև բողոքել է, որ Կառավարությունը որևէ միջոց չի ձեռնարկել հայտնաբերելու և հարցաքննելու համար “Ռուսլանին”, որն առանցքային դերակատարում է ունեցել վերահսկելի գնման ընթացքում և կարող էր լուսաբանել հրահրման աստիճանը:

15. 2009թ. նոյեմբերի 11-ին Մոսկվայի քաղաքային դատարանն ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի դատավճիռը: Այն հաստատել է եզրակացությունն այն մասին, որ դիմումատուն կատարել է թմրանյութերի վաճառքի փորձ վերահսկելի գնման ընթացքում,



անվերապահորեն մերժելով սադրանքի մասին մեղադրանքը՝ առանց անդրադառնալու դիմումատուի փաստարկներին:

### Բ. Պրն. Զոյոտուխինի դիմումը

16. Դիմումատուն ծնվել է 1982թ.-ին և ապրում է Եկատերինբուրգում: Ներկայումս ազատագրկման ձևով պատիժ է կրում Նիժնի Տագիլում:

17. Կառավարությունը ներկայացրել է, որ 2006թ. հունիսի 13-ին Տիկին Y-ը ինքնակամ ներկայացել է ոստիկանություն և տեղեկացրել, որ ինքը թմրամոլ է և ցանկանում է տեղեկություններ հաղորդել իրեն թմրամիջոցներ վաճառողի մասին: Նա պատմել է, որ ինքը հերոին է գնում դիմումատուից արդեն երկար ժամանակ, սակայն չի նշել, թե որքան ժամանակ: Ոստիկանությունը խնդրել է նրան մասնակցել դիմումատուից թմրանյութի վերահսկելի գնմանը, որին ինքը համաձայնվել է:

18. Դիմումատուի ներկայացմամբ ինքը ճանաչել է Y-ին հիմնական դպրոցից և իր ընկերուհու միջոցով: Նա իմացել է, որ վերջինս թմրամոլ է, հաճախակի իրեն առաջարկել է վաճառել անորոշ ծագմամբ օգտագործած բջջային հեռախոսներ: Վերահսկելի գնումից մի քանի ամիս առաջ Y-ն իրեն է վաճառել DVD նվագարկիչ, որը հետագայում առգրավվել է ոստիկանության կողմից որպես գողացված ապրանք: Այդ պատճառով Y-ն իրեն պարտք է 6,000 ռուսական ռուբլի՝ RUB, որը նա ի վիճակի չի եղել վճարել: 2006թ. հունիսի 13-ին նա կապվել է իր հետ և առաջարկել հատուցել պարտքը, սակայն մի պայմանով, որ ինքը կարողանա ձարել որոշ քանակությամբ հերոին, որի կարիքն ինքը սաստիկ զգում է: Դիմումատուն կապվել է իր ծանոթ վաճառողի հետ և պայմանավորվել Y-ի նշած չափով հերոինի վաճառքի վերաբերյալ: Նա նշել է, որ դա առաջին դեպքն է եղել, երբ ինքը համաձայնվել է թմրանյութ գնել Y-ի կամ որևիցե այլ անձի համար:

19. Հաստատված է համարվում այն փաստը, որ մինչև Y-ի հետ պայմանավորվածություն ձեռք բերելը, ոստիկանությունը երբևիցե չի տիրապետել դիմումատուի կողմից թմրանյութերի վաճառքի մեջ ներգրավված լինելու վերաբերյալ որևիցե տեղեկատվության:

20. Նույն օրը ոստիկանությունը որոշում է կայացրել վերահսկելի գնում կատարելու մասին: Որոշման մեջ նշվել է դիմումատուի անունը, հասցեն, ինչպես նաև այն մասին, որ դիմումատուն կասկածվում է գրամը 500 ռուսական ռուբլով (RUB) հերոին վաճառելու մեջ: Y-ին տրվել է 3,000 ռուսական ռուբլի դրամանիշերով, որոնք ֆոտոպատճենահանվել են: Նա զանգահարել է դիմումատուին և պայմանավորվել 5 գրամ հերոինի վաճառքի մասին: Հեռախոսային խոսակցությունը, որը տեղի է ունեցել ոստիկանությունից և ոստիկանների ներկայությամբ, չի ձայնագրվել: Դիմումատուն հանդիպել է Y-ին քաղաքի պայմանավորված վայրում և Y-ն նրան է փոխանցել գումարը: Ոստիկանները տեղում ձեռքակալել են դիմումատուին: Նրա մոտ հայտնաբերվել են 3,000 ռուսական ռուբլով դրամանիշներ, որոնք համապատասխանել են ոստիկանության կողմից կատարված կրկնօրինակներին: Y-ը փոխանցել է հերոինով փաթեթը, որը ենթադրաբար ձեռք է բերել դիմումատուից: Դիմումատուն պնդել է, որ ինքը չի մատակարարել Y-ի կողմից տրված թմրանյութը, քանի որ պատրաստվում էր նրան դա տալ հետագայում:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:

21. Ձերբակալությունից հետո դիմումատուին առաջարկվել է ոստիկանությանը տեղեկություններ տրամադրել այն թմրանյութ վաճառողի վերաբերյալ, որից ինքը Y-ի համար հերոին է գնել և մասնակցել նրանից վերահսկելի գնման կատարմանը, սակայն առաջարկը չի ընդունվել:

22. Գործը լավել է Եկատերինբուրգի Օրջոնիկիձեի շրջանի առաջին ատյանի դատարանի կողմից: Դատարանում դիմումատուն ընդունել է իր մեղքը, սակայն պատճառաբանել է, որ հանցագործությունը կատարել է ոստիկանության դրոշմային հետևանքով: Նա, մասնավորապես, նշել է, որ չկան այլ ապացույցներ իր նախկինում թմրամիջոցների առևտրի մեջ ներգրավված լինելու վերաբերյալ: Նա նշել է նաև, որ Y-ն իրեն նախկինում խնդրել է գնել հերոինին, իմանալով, որ ինքը ճանաչում է հերոին վաճառողին, սակայն ինքը մշտապես մերժել է: 2006թ. հունիսի 13-ին ինքը առաջին անգամ է համաձայնվել օգնել նրան և միայն այն բանի համար, որ վերջինս խոստացել է համաձայնության դեպքում վճարել պարտքը: Նա պատճառաբանել է, որ Y-ի մասնակցությունը վերահսկելի գնմանը չի եղել «կամավոր», այլ հրահրվել է ոստիկանության կողմից, որը մանիպուլյացիայի է ենթարկել նրան՝ օգտագործելով նրա կախվածությունը թմրամիջոցներից:

23. Y-ը դատաքննության ժամանակ ցուցմունք է տվել այն մասին, որ 2006թ. հունիսի 13-ին ինքը կամավոր գնացել է ոստիկանություն և տեղեկացրել այն մասին, որ դիմումատուն ներգրավված է թմրամիջոցների շրջանառության մեջ: Նա նաև նշել է, որ նախկինում ինքը ամենաքիչը երեք անգամ դիմումատուից հերոին է գնել:

24. Ոստիկանը, որն իրականացրել է վերահսկելի գնում, դատաքննության ժամանակ ցուցմունք է տվել այն մասին, որ 2006թ. հունիսի 13-ին Y-ը կամավոր ներկայացել է ոստիկանություն և հայտնել, որ ինքը կախվածություն ունի հերոինի օգտագործումից և ցանկանում է հայտնել, որ իրեն թմրանյութ մատակարարողը դիմումատուն է: Նա նաև նշել է, որ Y-ը համագործակցել է իր հետ մինչև ստուգողական գնումը 6 ամիս շարունակ, և մասնակցել նաև այս գործի հետ կապ չունեցող այլ վերահսկելի գնումների այլ անձանցից: Այնուհետև նա նշել է, որ մինչև 2006 հունիսի 13-ը ոստիկանությունը ոչ մի տեղեկություն չի ունեցել դիմումատուի վերաբերյալ և վերահսկելի գնումը տեղի է ունեցել Y-ի կողմից տեղեկություններ հայտնելուց հետո: Նրան խնդրել են անմիջապես հենց ոստիկանության բաժանմունքից զանգահարել դիմումատուին, իսկ երբ նա զանգահարել է, ապա անմիջապես, առանց որևիցե այլ հարցերի անդրադառնալու, խնդրել է դիմումատուին իրեն հերոին վաճառել:

25. Դատարանը նաև խաչաձև հարցաքննել է մեկ այլ ոստիկանի, որը մասնակցել է վերահսկելի գնմանը և ընթերցել հաստատող վկաների նախաքննական ցուցմունքները, որոնցում նրանք ներկայացնում են վերահսկելի գնման մանրամասները: 2006թ. սեպտեմբերի 28-ին դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել թմրանյութերի հատկապես խոշոր չափերի ապօրինի վաճառքի փորձի համար: Այն ուղղակիորեն չի անդրադարձել դիմումատուի մեղադրանքներին դրոշմային վերաբերյալ, եզրակացնելով, որ վաճառքի փաստը բավարար չափով հաստատված է, նաև նշելով, որ վերահսկելի գնումը տեղի է ունեցել դատավարական պահանջների պահպանմամբ: Այն նաև եզրակացրել է, որ իրադարձությունների վերաբերյալ դիմումատուի տարբերակը, մասնավորապես այն մասին, որ ինքը հանդիպել է Y-ին պարտքի պատճառով, հերքվում է այլ ապացույցներով: Դիմումատուն դատապարտվել է տաս տարով ազատազրկման, որը պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ գաղութում:

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:



26. Դիմումատուն բողոքել է՝ մեղադրելով ոստիկանությանը հանցագործության դրդաբանության մեջ և որ ինքը դատապարտվել է առաջին ատյանի դատարանի կողմից ապացույցների ոչ ճիշտ գնահատման պատճառով:

27. 2006թ. դեկտեմբերի 6-ին Սվերդլովսկի մարզային դատարանը ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի դատավճիռը: Այն չի անդրադարձել դրդաբանության վերաբերյալ մեղադրանքներին, սահմանափակվել է միայն դիմումատուի դատապարտումը օրինական և հիմնավորված լինելու վերաբերյալ եզրակացությամբ:

**C. Պրն. Դրուժինինի դիմումը**

28. Դիմումատուն ծնվել է 1977թ.-ին և ապրում է Մոսկվայում: Նախկինում վերապատրաստվել է որպես ոստիկան, 2002թ.-ին դատապարտվել է սպանության համար, ազատվելուց հետո աշխատել է որպես գողող: Ներկայումս իր պատիժն է կրում Մորդովայի հանրապետության ուղղիչ գաղութում ստորև ներկայացված թմրանյութերի հետ կապված հանցագործության համար դատապարտման հետևանքով:

29. Կառավարությունը ներկայացրել է, որ 2008թ. սեպտեմբերի 4-ին Տիկին Z-ն կամավոր ներկայացել է Թմրանյութերի Վերահսկողության Դաշնային Ծառայության (ԹՎԴԾ) տեղական գրասենյակ, հայտնել, որ ինքը հերոինից կախվածություն ունի և ցանկանում է իշխանություններին տեղյակ պահել այն մասին, որ դիմումատուն թմրանյութ վաճառող է: Ոստիկանությունը խնդրել է նրան մասնակցել դիմումատուից թմրանյութերի վերահսկելի գնմանը և վերջինս համաձայնել է:

30. Երկու կողմն էլ հաստատում են, որ մինչ Z-ի ոստիկանություն ներկայանալը , վերջիններս որևիցե տեղեկության չեն տիրապետել դիմումատուի թմրանյութերի վաճառքի մեջ հնարավոր ներգրավվածության վերաբերյալ: Այնուամենայնիվ, Կառավարությունը պնդում է, որ այդ մասին նաև ամրագրված է Թմրանյութերի Վերահսկողության Դաշնային Ծառայության մի սպայի զեկույցում՝ կազմված նույն օրը, 2008թ. սեպտեմբերի չորսին:

31. Դիմումատուն ներկայացրել է, որ ինքը Z-ին ճանաչում է մոտավորապես տաս տարի, իր անձնական շփումների միջոցով, ծանոթացել է նաև Տիկին P-ին նույնպես իր անձնական շփումների միջոցով: Թմրանյութերի Վերահսկողության Դաշնային Ծառայությունում անցած վերապատրաստման շնորհիվ տեղյակ էր, որ երկու կանայք էլ գտնվում են թմրանյութից կախվածության մեջ, ինչպես նաև ունեն նախկին դատվածություն կապված թմրանյութերի հետ և որ նրանք ոստիկանական իրազեկողներ են: 2008թ. սեպտեմբերի չորսին Z-ը զանգահարել է իրեն և խնդրել հայտնել P-ի հեռախոսահամարը , քանի որ ցանկանում է նրանից թմրանյութ գնել: Նա ասել է, որ տառապում է **hbbbh** համախտանիշով և գտնվում է ինքնասպանություն գործելու եզրագծին : Նույն օրն ավելի ուշ նա կրկին զանգահարել է և խնդրել ուղեկցել իրեն P-ի հետ հանդիպմանը, քանի որ մտավախություն ունի, որ վերջինս կհրաժարվի իրեն թմրանյութ վաճառել, եթե մենակ լինի: Կարեկցանքից ելնելով՝ ինքը համաձայնվել է: Երբ երեքով հանդիպել են, P-ն Z-ին է վաճառել երկու գրամ մետամֆետամին, որը էֆեդրինով տանը պատրաստված թմրանյութ է և որը ողջ դատաքննության ընթացքում անվանել է իր ժարգոնային անվանմամբ "Արագություն" («ВИИТ»): Դիմումատուն տեղում ձեռքակալվել է: Նա պնդում է, որ ինքը ձեռքակալման պահին իր մոտ չի ունեցել ոչ թմրանյութ և ոչ էլ փող և որ

[Type text]

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան Ներկայացուցչության օժանդակությամբ:





փողը իր մոտ գցել են խուզարկության ժամանակ: Նա, այնուամենայնիվ, ընդունել է, որ օգնել է Z-ին գնելու “Արագություն”, սակայն նաև պնդել է, որ առաջին անգամ է կատարել և այն էլ միայն այն բանից հետո, երբ վերջինս երկարատև աղերսել է և խնդրել օգնել իրեն:

32. Պաշտոնական գրառումները ներկայացնում են վերահսկելի գնման հետևյալ պատկերը: Z-ց ստանալով տեղեկություններ՝ ոստիկանությունը հրահանգել է կատարել վերահսկելի գնում և անմիջապես անցել դրա իրականացմանը: Հրամանում նշվում է դիմումատուի անունը և այն, որ նա կասկածվում է գրամը 500 ռուսական ռուբլով “Արագություն” վաճառելու մեջ: Z-ին տվել են 1,000 ռուբլի թղթադրամներով, որոնք պատճենահանվել են: Z-ը ոստիկանությունից զանգահարել է դիմումատուին և խնդրել իր համար թմրանյութ ձեռք բերել: Վերջինս ետ է զանգահարել Z -ին և պայմանավորվել երկու գրամ “Արագություն” գնելու շուրջ: Ոստիկանները լսել են Z-ի և դիմումատուի հեռախոսային խոսակցությունը, սակայն չեն ձայնագրել: Դիմումատուն նույն գիշեր հանդիպել է Z-ին և նրանք միասին գնացել են հանդիպելու մեկ այլ անձի՝ P-ին: Այն պահին, երբ Z-ը նշան է տվել ոստիկանությանը, նրանք անմիջապես ձերբակալել են դիմումատուին և տարել ոստիկանական բաժանմունք: Ոստիկանական բաժանմունքում ոստիկանները զննել են նրա դրամապանակը և նրա մոտ ենթադրաբար հայտնաբերել 1000 ռուսական ռուբլի թղթադրամով, որ համապատասխանել են պատճենահանված օրինակներին: Z-ը հանձնել է “Արագություն” պարունակող ներարկիչ, որը ենթադրաբար գնել է դիմումատուից: P-ն ձերբակալվել է, սակայն շուտով ազատ է արձակվել և քրեական հետապնդման չի ենթարկվել:

33. Դատաքննության ժամանակ դիմումատուն ընդունել է իր մեղքը այն բանում, որ օգնել է Z-ին գնելու թմրանյութ, սակայն պնդել է, որ ոստիկանությունն է իրեն դրդել և պահանջել, որպեսզի այն ապացույցները, որոնք վերաբերվում են վերահսկելի գնմանը, բացառվեն:

34. Z-ը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը ոստիկանությանը կամավոր տեղեկություններ է հայտնել դիմումատուի մասին, քանի որ մտածել է, որ դա իրեն կօգնի հաղթահարելու իր կախվածությունը: Նա նշել է, որ մինչ վերահսկելի գնումը, ինքը երբեք դիմումատուից թմրանյութ չի գնել, այնուամենայնիվ, քանի որ իրենք միասին էին գնում և օգտագործում, ինքը ոստիկանությանը ասել է, որ ինքն ի վիճակի է համոզել նրան իր համար թմրանյութ ձեռք բերել: Նա նաև նշել է, որ իրեն հայտնի չէ թե արդյոք դիմումատուն նախկինում երբևիցե վաճառել է թմրանյութ որևիցե մեկին, և որ ինքը գրեթե համոզված է, որ նա չի պատրաստել ինքնուրույն: Նա նաև ընդունել է, որ ինքը սովորաբար թմրանյութ է գնել մեկ այլ աղբյուրից: Վերջապես, ինչ վերաբերվում է վերահսկելի գնման հանգամանքներին, ցուցմունք է տվել, որ ինքը փողը տվել է դիմումատուին և նրանից էլ վերցրել ներարկիչը և որ ինքը չի տեսել P-ին ո՛չ ներարկիչը, և ո՛չ էլ փողը վերցնելուց:

35. Դիմումատուն պահանջել է, որպեսզի P-ն կանչվի դատարան և խաչաձև հարցաքննվի, սակայն դատարանը նշել է, որ վերջինս ծանուցվել է, սակայն խուսափել է ներկայանալուց և նրա գտնվելու վայրը հայտնի չէ: Դատարանն այս հանգամանքը համարել է բացառիկ հանգամանք, որը թույլ է տալիս ընդունել նրա գրավոր դեպոնացված ցուցմունքը: Չնայած դիմումատուի առարկություններին, դատարանն ընթերցել է նրա մինչդատական ցուցմունքը՝ որտեղ ասվում է, որ դիմումատուի խնդրանքով ինքը թմրանյութերը բերել է նախօրոք պայմանավորված վայր, սակայն վաճառքը կազմակերպվել է դիմումատուի կողմից:

36. Չորս ոստիկան հարցաքննվել են քողարկված օպերացիայի վերաբերյալ: Նրանք վերահաստատել են վերահսկելի գնման մանրամասները: Նրանցից մեկն ի պատասխան

հարցի ցուցմունք է տվել, որ Z-ը հատուցում չի ստացել ոստիկանության հետ իր համագործակցության համար:

37. 2009թ. փետրվարի 17-ին Մոսկվայի Զյուզինսկի շրջանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել թմրանյութերի ապօրինի վաճառքի փորձի համար և դատապարտել չորս և կես տարվա ազատազրկման: Վերջնական պատիժը կազմել է հինգ տարի ազատազրկում՝ նախկին դատավճռով սահմանված պայմանական ազատման պայմանները խախտելու համար:

38. Դիմումատուն բողոքարկել է՝ ոստիկանությանը մեղադրելով հանցագործության դրդյալության մեջ, որի համար ինքը դատապարտվել է, նշելով, որ առաջին ատյանի դատարանը ճիշտ գնահատական չի տվել ապացույցներն:

39. 2009թ. մայիսի 13-ին Մոսկվայի քաղաքային դատարանը քննել է բողոքը: Այն մերժել է պրովոկացիայի մասով պատճառաբանությունը, նշելով, որ վերահսկելի գնումը հիմնված է եղել Z-ի ոստիկանությանը ներկայացրած տեղեկատվության վրա, մասնավորապես այն մասին, որ ինքը “նախկինում դիմումատուից գնել է թմրանյութ բազմաթիվ անգամ”, և եզրակացրել, որ այսպիսով վերահսկելի գնումը օրինական է եղել: Այն ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի դատավճիռը, որպես հիմնավոր:

II. ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

A. Թմրանյութերի շրջանառության համար քրեական պատասխանատվություն

40. Քրեական Դատավարության Օրենսգրքի 228.1 Հոդվածը (ինչպես ուժի մեջ է եղել խնդրո առարկա ժամանակահատվածում) սահմանում է, որ թմրանյութերի կամ հոգեներգործուն նյութերի ապօրինի վաճառքը պատժվում է ազատազրկմամբ չորսից ութ տարի ժամանակով; նույն հանցագործությունը, որը կատարվել է խոշոր չափերով կամ մի խումբ անձանց կողմից նախապես համաձայնության գալով, պատժվում է ազատազրկմամբ մինչև տասներկու տարի ժամանակով, նույն հանցագործությունը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով, պատժվում է ազատազրկմամբ մինչև քսան տարի ժամանակով (Հոդված 228.1 § 3 (դ)):

41. 2006թ. հունիսի 15-ի Ռուսաստանի Գերագույն դատարանի Պլենումը ընդունել է դեկավար սկզբունքներ քրեական գործերով դաշնային իրավասության մասին (հրամանագիր թիվ 14), որոնք վերաբերվում են թմրամիջոցներին կամ հոգեմետ, ուժեղ, ներգործող և թունավոր նյութերին: Պլենումը սահմանել է, որ նմանատիպ նյութերի ցանկացած վաճառք, որը կատարվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման շրջանակներում իրականացված վերահսկելի գնման արդյունքում, պետք է որակվի որպես վաճառքի փորձ (Հոդված 30 § 3 , Քրեական Օրենսգրքի 228.1 հոդվածով): Այն նաև սահմանում է հետևյալ պայմանները, որոնց առկայությամբ միայն վերահսկելի գնման արդյունքները կարող են ընդունվել որպես ապացույց քրեական դատավարությունում՝ (i) պետք է ձեռք բերված լինեն օրենքով սահմանված կարգով, (ii) պետք է ակնբախ լինի, որ ամբաստանյալի մտադրությունը զբաղվել թմրանյութերի ապօրինի շրջանառությամբ ձևավորվել է ինքնուրույն՝ անկախ գաղտնի գործակալների կողմից ձեռնարկած քայլերի (iii), պետք է երևա, որ ամբաստանյալն է իրականացրել բոլոր նախապատրաստական քայլերը, որոնք անհրաժեշտ են հանցագործության կատարման համար:

[Type text]

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան Ներկայացուցչության օժանդակությամբ:



## **B. Քննության մեթոդներ**

42. 1995թ. օգոստոսի 12-ի Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքը (no. 144-FZ) խնդրո առարկա հանդիսացող ժամանակահատվածում սահմանել է հետևյալը՝

### **Բաժին 1: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ**

“Օպերատիվ – հետախուզական գործունեությունը բացահայտ կամ քողարկված գործունեության ձև է, որն իրականացվում է սույն օրենքով լիազորված պետական՝ մարմինների օպերատիվ ստորաբաժանումների կողմից (այսուհետ՝ կազմակերպություններ, որոնք իրականացնում են օպերատիվ – հետախուզական միջոցառումներ) իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, նպատակ ունենալով պաշտպանելու քաղաքացիների և անձանց կյանքը, առողջությունը, իրավունքներն ու ազատությունները կամ գույքը, ինչպես նաև հասարակությունը և պետությունը քրեական հանցագործություններից»:

### **Բաժին 2. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները**

“Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներն են՝

– Բացահայտել, կանխարգելել, կանխել և հետաքննել հանցագործությունները, ինչպես նաև մեղավորների որոնողական եւ բացահայտման աշխատանքներ կատարել պլանավորման եւ կատարման ընթացքում...”

### **Բաժին 5: Մարդու իրավունքների և քաղաքացիների ազատությունների պաշտպանությունը օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում**

“...

Անձը, համարելով, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող գործակալությունը խախտել է իր իրավունքներն ու ազատությունները, կարող է բողոքարկել գործակալության գործողությունները օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող վերադաս մարմին, դատախազություն, կամ էլ դատարան:

...”

## **Section 6: Օպերատիվ-հետախուզական միջոցներ**

“օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս կարող են ձեռնարկվել հետևյալ միջոցները՝

...

4. ստուգողական գնում;

...

9. փոստ- հեռագրային, հեռախոսային և այլ հաղորդակցությունների վերահսկում;

10. հեռախոսային խոսակցությունների լսում;



11. տվյալների հավաքում հաղորդակցության տեխնիկական կապուղիների միջոցով;
12. օպերատիվ ներդրում;
13. վերահսկվող մատակարարում;
14. օպերատիվ փորձարկում.

...

Օպերատիվ հետախուզական միջոցառումները, որոնք ներառում են փոստ-հեռագրային և այլ հաղորդակցությունների նկատմամբ վերահսկողություն, հեռախոսային խոսակցությունների լսում [հեռահաղորդակցական ընկերությունների] միջոցով, և տվյալների հավաքումը հաղորդակցության տեխնիկական կապուղիների միջոցով, որոնք կատարվում են տեխնիկական միջոցների կիրառմամբ, պետք է իրականացվեն Ներքին գործերի նախարարության Դաշնային Անվտանգության Ծառայության կողմից և թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերը Կարգավորող մարմինների կողմից, համաձայն ներգրավված գերատեսչությունների միջև կնքված համաձայնագրերի և որոշումների:

...”

#### **Բաժին 7. Օպերատիվ – հետախուզական միջոցառումներ իրականացնելու հիմքերը**

“[օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կարող են իրականացվել հետևյալ հիմքերի առկայության դեպքում`] ...

1. առկա է քրեական վարույթ;
2. օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացվող գործակալությունը տիրապետում է տեղեկատվության, որը:

(1) մատնանշում է , որ հանցագործությունը պլանավորվում է կատարել, կամ էլ արդեն կատարվել է, կամ էլ մատնանշում է այն անձանց, որոնք պլանավորում են կատարել, կամ էլ արդեն կատարել են հանցագործություն, եթե բավարար ապացույցներ չկան քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու համար;

...”

#### **Բաժին 8. Օպերատիվ – հետախուզական միջոցառումների իրականացումը կարգավորող պայմանները:**

“Օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնք ներառում են մարդու անձնական կյանքի գաղտնիության սահմանադրական իրավունքի միջամտություն, լարով կամ հեռագրային ծառայություններով իրականացվող փոստ-հեռագրային և այլ հաղորդակցությունների միջոցով, կամ էլ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի միջամտություն, կարող են իրականացվել դատարանի կողմից որոշման կայացումից հետո, որին նախորդել է տեղեկատվության ստացում հետևյալի մասին`

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:

1. կա բավարար հիմք ենթադրելու, որ կատարվել է հանցագործություն, կամ էլ կատարվելու է, կամ էլ նախապատրաստվում է հանցագործություն, որի վերաբերյալ նախաքննության կատարումը պարտադիր է:

2. անձինք, որոնք համաձայնության են գալիս կատարելու, կամ էլ կատարում են կամ արդեն կատարել են հանցագործություն, որի նախաքննությունը պարտադիր է;

...

Վերահսկելի գնում..., օպերատիվ փորձարարություն, կամ էլ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնող գործակալության կամ նրանց աջակցող անհատների կողմից գործակալի ներդրումը պետք է կատարվի օպերատիվ – հետախուզական միջոցառումներ իրականացնող գործակալության ղեկավարի հրամանով:

Օպերատիվ փորձարարությունները կարող են կատարվել միայն ծանր հանցագործությունների բացահայտման, կանխարգելման, դադարեցման, հետաքննության կատարման, կամ էլ այն անձանց բացահայտման նպատակով, ովքեր նախապատրաստում են, կատարում են, կամ էլ արդեն կատարել են հանցագործություն:

...”

**Բաժին 9: Անձանց սահմանադրական իրավունքներին միջամտություն ներառող օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման համար անհարժեշտ դատական թույլտվության հիմքերը**

“օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման պահանջները, որոնք ներառում են մարդու անձնական կյանքի գաղտնիության սահմանադրական իրավունքի միջամտություն, լարով կամ հեռագրային ծառայություններով իրականացվող փոստ-հեռագրային և այլ հաղորդակցությունների միջոցով, կամ էլ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի միջամտություն գտնվում են այն վայրի դատարանի իրավասության տակ, որտեղ պետք է իրականացվեն պահանջվող միջոցառումները, կամ էլ, որտեղ գտնվում է պահանջ ներկայացնող մարմինը: Պահանջը պետք է քննության առնվի անմիջապես մեկ դատավորի կողմից, հարցի քննությունը չի կարող մերժվել:

...

Պահանջը քննող դատավորը պետք է որոշի, թե արդյոք պետք է թույլատրել այնպիսի միջոցների կիրառումը, որոնք ներառում են միջամտություն վերը նշված սահմանադրական իրավունքներին, կամ էլ մերժի՝ նշելով պատճառները:

...”

**Բաժին 10: Օպերատիվ-հետախուզական միջոցառումները ապահովող փաստաթղթերը և տեղեկատվությունը**

“ Սույն օրենքով սահմանված նպատակներին հասնելու համար օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող գործակալությունները կարող են ստեղծել և օգտագործել տվյալների շտեմարաններ, բացել օպերատիվ հաշվառման նիշքեր:



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:

Օպերատիվ հաշվառման նիշքերը կարող են բացվել սույն օրենքի of բաժինը(1)-ի 1-ից 6 կետերով սահմանված հիմքերով:

...”

### **Բաժին 11: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տեղեկատվության օգտագործումը**

“Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տեղեկատվությունը կարող է օգտագործվել նախաքննության և դատաքննության նախապատրաստման և անցկացման նպատակով ... և օգտագործվել որպես ապացույց քրեական դատավարությունում օրենքով սահմանված ապացույցների ձեռքբերման, գնահատման և քննության դրույթներին համապատասխան ...”

43. 2007թ. հուլիսի 24-ին Օրենքի 5-րդ բաժինը փոփոխվել է՝ արգելելով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող գործակալություններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն հրահրելու կամ դրդելու քրեական հանցագործության կատարումը:

44. Ռուսաստանի Դաշնության Քրեական Դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածը, 2002թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած տարբերակով խնդրո առարկա ժամանակահատվածում սահմանեց, որ հետաքննիչի, քննիչի կամ դատախազի հրամանները, որոնք կարող են ոսնձգել քրեական դատավարության մասնակիցների սահմանադրական իրավունքների վրա, կամ էլ խոչընդոտում են արդարադատությանը նրանց հասանելիությանը, կարող են բողոքարկվել այն դատարանին, որի իրավասությունը տարածվում է նախաքննության կատարման վայրի նկատմամբ: Օրենսգրքի հետագա փոփոխություններով նախաքննություն կատարող իրավասու մարմնի պետը ավելացվել է այն անձանց ցանկին, որոնց հրամանները ենթակա են բողոքարկման: .

45. 2009թ. փետրվարի 10-ին Ռուսաստանի Դաշնության Գերագույն Դատարանն ընդունեց ուղեցույցներ (Հրամանագիր No. 1) Ռուսաստանի Դաշնության Քրեական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածով սահմանված կարգով բերված բողոքների դատական քննության պրակտիկայի մասին: Պլենումը որոշեց *inter alia*, որ իրավասու գործակալությունների որոշումները նույնպես ենթակա են բողոքարկման 125-րդ հոդվածով սահմանված կարգով, եթե պաշտոնյաները գործել են քննիչի, քննչական բաժնի պետի, կամ էլ հետաքննիչի կողմից կայացված որոշման հիման վրա:

### **C. Ապացույցները քրեական դատավարությունում**

46. Քրեական դատավարության օրենսգիրքը համապատասխանաբար սահմանում է՝

#### **Հոդված 75. Անթույլատրելի ապացույց**

“1. Սույն օրենսգրքի խախտմամբ ձեռք բերված ապացույցը պետք է ճանաչվի անթույլատրելի: Անթույլատրելի ապացույցը չի կարող ունենալ իրավաբանական ուժ և չի

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:

կարող դրվել քրեական մեղադրանքի հիմքում, կամ էլ ապացուցելու համար ցանկացած [հանգամանք, ինչ նպատակով ձեռք է բերվել ապացույցը քրեական դատավարությունում]:

...”

### **Հոդված 235: Ապացույցը բացառելու պահանջ**

“...

5. Եթե դատարանը որոշում է բացառել ապացույցը, ապա այդ ապացույցը չի կարող օրինական ուժ ունենալ և չի կարող դրվել դատավճռի, կամ էլ որևիցե այլ դատական ակտի հիմքում, կամ էլ հետագոտվել կամ օգտագործվել դատաքննություն ժամանակ:

47. ՔԴՕ 392 հոդվածը սահմանում է այն իրավիճակների ցանկը, որոնց դեպքում կարող է վերանայվել արդեն վերջնական լուծում ստացած գործը՝ նոր երևան եկած հանգամանքների ուժով: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռը, որով խախտված են համարվում մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքները այն գործով, որով դիմումատուն բողոք է ներկայացրել Մարդու Իրավունքների Եվրոպական դատարան, հանդիսանում է նոր երևան եկած հանգամանք (Հոդված 392 § 4 (4)).

### **III. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

48. Դատարանը կատարել է վերահսկելի գնման և նմանատիպ այլ գաղտնի օպերացիաներում գաղտնի գործակալների օգտագործման վերաբերյալ Եվրախորհրդի անդամ քսաներկու երկրների օրենսդրության (Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Չեխիայի Հանրապետություն, Խորվաթիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իռլանդիա, Իտալիա, Լիխտենշտեյն, Լիտվա, “Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետություն,” լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովենիա, Իսպանիա, Թուրքիա և Միացյալ Թագավորություն) համեմատական վերլուծություն:

49. Համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ նշված բոլոր երկրներում ոստիկանությունը կարող է իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, մասնավորապես թմրանյութերի շրջանառության գործերով, համաձայն համապատասխան օրենքով կամ կանոններով սահմանված կարգի: Միայն Իռլանդիայում է, որ գաղտնի ոստիկանության օգտագործումը չի կարգավորվում օրենսդրությամբ կամ որևիցե այլ ընթացակարգային կանոններով: Որոշ երկրներ նախատեսում են նաև մասնավոր անձանց ներգրավումը և գաղտնի գործակալների օգնությանն են դիմում միայն այն ժամանակ, երբ ապացույցների հավաքումն այլ միջոցներով անհնարին է, կամ էլ բավականին բարդ:

50. Ուսումնասիրությունը նաև ի հայտ բերեց, որ հետագոտված երկրների մեծամասնությունը սահմանում է դատական մարմինների բացառիկ, կամ էլ խառը իրավասություն այդ գործողությունների կատարման թույլտվության համար, նաև, որոշ երկրներում որոշումը կայացվում է դատախազի, վարչական մարմինների, կամ էլ բարձր ոլորտի ոստիկանական պաշտոնյաների կողմից:

51. Դատական թույլտվություն է պահանջվում Բուլղարիայում (դատարան), Խորվաթիայում (հետաքննվող դատավոր), Էստոնիայում (հետաքննող դատավոր), Հունաստանում

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:



(մեղադրական եզրակացության պալատ), Լիխտենշտեյնում, Լեհաստանում (մարզային դատարան Գլխավոր Դատախազի հետ նախնական համաձայնությամբ), Սլովենիայում (հետաքննվող դատավոր), և Թուրքիայում (դատավոր)։

52. Ավստրիայում և Բելգիայում գաղտնի օպերացիայի թույլտվություն տվող իրավասու մարմինը բացառապես դատախազն է։

53. Որոշ երկրներ սահմանում են դատախազի կամ դատարանի, կամ էլ երկուսի միաժամանակ մասնակցությունը, կախված օրինակ, օպերացիայի տեսակից, կամ էլ, որ ավելի տարածված է՝ դատավարության փուլից։

54. Չեխիայի Հանրապետությունում, “կեղծ փոխանցումները”, որը ներառում է վերահսկելի գնում, պահանջում է թույլտվություն դատախազի կողմից, իսկ օրինակ՝ գաղտնի գործակալի օգտագործումը (առանձնապես վտանգավոր հանցագործությունների դեպքում) կարող են թույլատրվել միայն Բարձր դատարանի դատավորի կողմից։ Գերմանիայի օրենքով գաղտնի գործակալի օգտագործումը պետք է թույլատրվի դատախազի կողմից, ինչպես նաև դատարանի կողմից այն դեպքում, երբ օպերացիան ուղղված է հատուկ անձնավորության, կամ էլ ներառում է մասնավոր տարածք մուտք գործում։ Ռումինիայում նույնպես թույլտվությունը տրվում է դատախազի կողմից, սակայն օպերացիայի ընթացքում վիդեո և աուդիո ձայնագրության կատարման համար պահանջվում է նախապես թույլտվություն ստանալ դատավորի կողմից։

55. Ֆրանսիայում թույլտվությունը տրվում է դատախազի կողմից հետաքննության փուլում և հետաքննող դատավորի կողմից՝ (*juge d'instruction*) նախաքննության փուլում։ Լիտվայում նմանապես, պահանջվում է մինչ-դատական դատավորի թույլտվությունը նախաքննության փուլում, իսկ ավելի վաղ փուլում՝ թույլտվությունը դատախազի կողմից բավարար է։ Մակեդոնիայի “նախկին Հարավսլավիայի” Հանրապետությունում մինչդատական փուլում հատուկ քննչական միջոցների օգտագործման թույլտվությունը կարող է տրվել կամ դատախազի, կամ էլ հետաքննող դատավորի կողմից, բայց նախաքննության հարուցման պահից թույլտվությունը տրվում է միայն հետաքննող դատավորի կողմից։

56. Պորտուգալիայում հետաքննության ընթացքում գաղտնի օպերացիաների անցկացման համար անհրաժեշտ է նախօրոք ձեռք բերել դատախազության իրավասու անդամի թույլտվությունը՝ պարտադիր հաղորդակցվելով հետաքննող դատավորի հետ, որը համարվում է հաստատված, եթե չի մերժվում 72 ժամվա ընթացքում։ Եթե օպերացիան իրականացվում է հանցագործությունների կանխման շրջանակներում, ապա համապատասխան թույլտվություն տալը գտնվում է հետաքննող դատավորի իրավասության ներքո՝ դատախազության առաջարկությամբ։

57. Իսպանիայի օրենքով պահանջվում է տեղեկացնել հետաքննող դատավորին դատախազից գաղտնի օպերացիայի անցկացման թույլտվություն ստանալու դեպքում։ Նման թույլտվություն կարող է ուղղակիորեն տալ նաև հետաքննող դատավորը։

58. Իտալիայում դատախազից կամ դատավորից պաշտոնական թույլտվություն ստանալու պահանջ չկա, սակայն համապատասխան մարմինը պարտավոր է օպերացիան սկսելուց առաջ տեղեկացնել իրավասու դատախազին։ Թմրանյութերի գործերով մինչ գաղտնի օպերացիայի կատարմանը ձեռնամուխ լինելը Թմրանյութերի ծառայության Կենտրոնական տնօրինությունը կամ իր տարածաշրջանային կամ նահանգային գրասենյակը պետք է տեղեկացնի

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ։



հետաքննության համար պատասխանատու դատախազին, սակայն անհրաժեշտ չէ նրանից պաշտոնական հաստատում ստանալ:

59. Որոշ երկրներում թույլտվության ստացման գործընթացում դատավորը և դատախազը ներգրավված չեն: Ֆինլանդիայում գաղտնի օպերացիաների անցկացման մասին որոշումը կայացնում է Հետաքննության Ազգային Բյուրոյի ղեկավարը, կամ էլ Անվտանգության Ոստիկանության Ղեկավարը՝ ոստիկանության բաժնի պահանջով: Որոշում կայացնող մարմինները և օպերացիան իրականացնող մարմինները տարբեր են:

60. Միացյալ Թագավորությունում գաղտնի օպերացիաների իրականացման համար թույլտվության տրամադրումը տնվում է ոչ թե դատական , այլ վարչական իրավասության ներքո: Լորդերի Պալատի Ռ-ն ընդդեմ Լուսելի [2001] որոշման մեջ Լորդ Մաքեյն ընդգծել է, որ չնայած Միացյալ Թագավորությունում նմանատիպ պրակտիկայի թույլտվության ստացման և վերահսկողության իրականացման տեխնիկան բավականին տարբերվում է մայրցամաքային երկրների դատական վերահսկողության պրակտիկայից, այնուամենայնիվ , նպատակը նույնն է՝ մասնավորապես վերացնել ոստիկանների կողմից առանց պատշաճ վերահսկողության իրականացվող գործունեության հետևանքով առաջացող շոքի մեղման, կոռուպցիայի կամ իշխանության չարաշահման ռիսկը: Պետական մարմինների ցանկը, որոնք իրավասու են թույլատրել օգտագործելու կամ իրականացնելու Գաղտնի Օպերատիվ-Հետախուզական (ԳՕՀԱ) սահմանված են օրենքով: Յուրաքանչյուր պետական մարմին ունի իր սեփական թույլտվություն տվող աշխատակիցը:

Թույլտվություն տվող աշխատակիցները չպետք է իրավասություն ունենա իր սեփական գործունեությունը թույլատրելու, այսինքն՝ այն դեպքում, երբ ինքն է անձամբ մասնակցում որպես Որպես, կամ էլ որպես ԳՕՀԱ մշակող: Ավելին, հնարավորության սահմաններում թույլտվություն տվող պաշտոնյաները պետք է անկախ լինեն նախաքննությունից: Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ դա ոչ միշտ է հնարավոր, հատկապես փոքր կազմակերպությունների գործերով, այն դեպքում, երբ անհրաժեշտ է գործել անհապաղ, կամ էլ անվտանգության նպատակներով: Երբ թույլտվություն տվող պաշտոնյան թույլտվություն է տալիս սեփական գործողությունների համար, ապա թույլտվությունների կենտրոնական հաշվառումը պետք է ընդգծի այս հանգամանքը և հաջորդ ստուգման ընթացքում հսկողություն իրականացնող տեսուչի կամ կոմիսարի ուշադրությունը հրավիրվի այս հանգամանքի վրա:

61. Իռլանդիայում նմանապես, գոյություն չունի դատական թույլտվության գործընթաց: Ոստիկանությունը կամ այլ իրավապահ մարմինները գաղտնի օպերացիաների մասին և որոշում են կայացնում, և կատարում:

#### IV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆՈՐՄԵՐԸ

##### A. Եվրոպայի Խորհրդի Փաստաթղթերը

62. . Եվրոպայի Խորհրդի Փաստաթղթերը հետաքննության հատուկ մեթոդների մասին սահմանված են Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի (*Ramanauskas v. Lithuania*) ([GC], հա. 74420/01, §§ 35-37, ՄԻԵԴ 2008-...) գործով:



## B. Նախարարների Խորհրդի Որոշումները

63. 2001թ. փետրվարի 26-ին Նախարարների Խորհուրդը, քննության առնելով հա. 25829/94 Թեիքսերիա դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի (*Teixeira de Castro v. Portugal*) (9 հունիսի 1998թ., Վճիռների մասին զեկույցներ և որոշումներ 1998-IV) գործով դիմումը և ընդունելով CM/Res DH(2001)12 որոշումը նկարագրեց այն միջոցները, որոնք ձեռնարկել է Պորտուգալիայի կառավարությունը կանխելու համար Հոդված 6 § 1-ի ապագա խախտումները կապված ոստիկանության կողմից գաղտնի գործակալի օգտագործման հետ.

“... որպեսզի ապահովվի, որ գաղտնի գործակալների օգտագործումն անհարկի չի միջամտում Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքին, Թմրանյութերի Ապօրինի Շրջանառության մասին No. 15/93 օրենսդրական դեկրետի 59-րդ հոդվածը 1966թ. սեպտեմբերի 3-ի No. 45/1996 ակտով փոփոխվել է: Համաձայն ավելացված 59-րդ հոդվածին ավելացված 3-րդ պարագրաֆի, նման անձանց օգտագործումը ենթակա է դատարանի կողմից հաստատման, որը պետք է տրվի 5 օրվա ընթացքում, որոշակի ժամանակով:

Կառավարությունն այն կարծիքի է, որ Կոնվենցիայի վերադաս իրավաբանական ուժ ունենալու տեսանկյունից, ինչպես մեկնաբանվել է Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի կողմից, Պորտուգալիայի օրենքում (Սահմանադրական Դատարանի որոշում Nos. 345/99 of 15 Հունիս 1999 և 533/99 of 12 հոկտեմբեր 1999), Պորտուգալիայի դատարանները պետք է կիրառեն այդ վերադասությունը և Քրեական Դատավարության Օրենսգրքի իրենց մեկնաբանությունները համապատասխանեցնեն (մասնավորապես Հոդված 126-ը) խուսափելու համար այնպիսի խախտումներից, որոնք հայտնաբերվել են Թեքսերիա Դե Կաստրոյի գործով: .

Հեշտացնելու համար այդ համապատասխանեցումը, Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի վճիռը հրատարակվել է Պորտուգալիայի քրեագիտության ամսաթերթում՝ *Revista Portuguesa de Ciência Criminal* (RPCC 10/2000) և նաև բաժանվել բոլոր այն պետական կառույցներին, որոնց վերաբերվում է, ներառյալ ոստիկանությունը:”

64. Օր 10 March 2011թ. մարտի 10-ին Նախարարների Խորհուրդն ի կատարում Պիրգիոտակիս ընդդեմ Հունաստանի (*Pyrgiotakis v. Greece*) (հա.15100/06, 21 փետրվարի 2008) գործով վճռի ընդունեց ResDH(2011)11 որոշումը, որը սահմանում է հետևյալը.

“ Դատարանի եզրահանգումները արտացոլվել են ազգային-դատական նախադեպում. Սահմանվել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխան, մեղադրյալի դատապարտումը չի կարող հիմնված լինել բացառապես միայն գործի մեջ ներգրավված ոստիկանական աշխատակցի (որը գործում է որպես գործակալ-սաղրիչ) գործողություններից, այլապես արդար դատաքննության իրավունքի պահանջները պահպանված չեն լինի (Վճռաբեկ Դատարան 193/2009). «Ավելին, այդ դատապարտումը պետք է հիմնված լինի լրացուցիչ ուժեղ ապացույցների վրա և ոչ թե միայն ներգրավված ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա: (Վճռաբեկ դատարան 100/2007 Corfu Վերաքննիչ դատարան 29/2007)»:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:

65. 2011թ. դեկտեմբերի 2-ին Նախարարների Խորհուրդը ի կատարումը վերը վկայակոչված Ռամանաուսկասի և Մալինինասն ընդդեմ Լիտվայի (*Malininas v. Lithuania*) (հա.10071/04, 1 Հուլիսի 2008) գործերի ընդունված CM/ResDH(2011)231 որոշումը, նկարագրելով Լիտվայի Կառավարության կողմից Կոնվենցիայի 6-րդ Հոդվածի 1-ին պարագրաֆի հետագա խախտումները կապված ոստիկանության գաղտնի գործակալների օգտագործման հետ կանխելու նպատակով ձեռնարկված միջոցները, եզրակացրեց.

“Մանաստիպ խախտումների կանխման նպատակով Գերագույն Դատարանն իր 2008թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ սահմանեց հիմնարար սկզբունքներ կապված այն գործերի հետ, որտեղ որդեգրվել է քրեական վարքագիծ սաղրելու մոդելը:

Նախ, Գերագույն դատարանը նշել է, որ քրեական վարքագծի սաղրումը դա քննչական տեխնիկա է, որը չի կարող օգտագործվել հանցագործության կատարման հրահրման նպատակով, սակայն կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ վստահելի և օբյեկտիվ տեղեկատվություն արդեն ձեռք է բերվել այն մասին, որ հանցավոր գործողություններն արդեն նախաձեռնվել են:

Երկրորդ, պետական պաշտոնյաները չեն կարող գործել որպես մասնավոր անձինք սաղրելու համար երրորդ անձանց կատարելու հանցագործություն, մինչդեռ մասնավոր անձանց գործողությունները՝ ուղղված երրորդ անձանց հանցագործության կատարմանը սաղրելուն, որոնք կատարվում են պաշտոնատար անձանց վերահսկողության և ուղղորդման ներքո, հանդիսանում են խթանում:

Երրորդ, կարելի է ենթադրել, որ տեղի է ունեցել սաղրում նույնիսկ այն դեպքերում, երբ պետական պաշտոնյաները չեն գործել շատ ինտենսիվ և ճնշող միջոցներով, ներառյալ այն իրավիճակները, երբ երրորդ անձանց շփումները կատարվել են անուղղակիորեն միջնորդների միջոցով:

Չորրորդ, դատաքննության ընթացքում ապացուցման պարտականությունը կրում է պետական մարմինը, որը պարտավոր է հերքել մեղադրյալի կողմից ներկայացրած ցանկացած փաստարկ այն մասին, որ տեղի է ունեցել հանցագործության հրահրում:

Հինգերորդ, հրահրման փաստը հաստատվելու դեպքում դրա արդյունքում ձեռք բերված ցանկացած ապացույց չի կարող ընդունելի լինել: Սաղրման հետևանքով կատարված ինքնախոստովանությունը չի կարող վերացնել կամ խթանել դրա ազդեցությունը:

Վեցերորդ, նախընտրելի է, որ գաղտնի գործողությունները գտնվեն դատական հսկողության տակ, չնայած դատախազական հսկողությունն ինքնին չի խախտում Կոնվենցիան:

Գերագույն Դատարանի որոշումը պարտադիր է բոլոր ազգային դատարանների համար: This decision of the Supreme Court is binding upon all domestic courts. Այսպիսով, այն ապահովում է հստակ և կանխատեսելի ընթացակարգ նման դեպքերի համար»:



## ՕՐԵՆՔԸ

## I. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄ

66. Հաշվի առնելով, որ ներկայացված դիմումները պարունակում են նմանատիպ բողոքներ և Կոնվենցիայով սահմանված նմանատիպ խնդիրների վերաբերյալ են հարցեր բարձրացնում, Դատարանը որոշեց, որ միացնել դրանք համաձայն Դատարանի Կանոնադրության կանոն 42 § 1-ի:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

67. Դիմումատուները բողոքել են, որ իրենք անարդար են դատապարտվել թմրանյութերի հետ կապված հանցագործության կատարման համար, այն հրահրվել է ոստիկանության կողմից, որ դրոշխության մասին հայտարարությունը անհրաժեշտ ձևով չի քննվել ազգային քրեադատավարական գործընթացներում, որով և խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Այս բողոքները ենթակա են քննության Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1 պարագրաֆի համաձայն, որը սահմանում է

« Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի ...արդարացի ....դատաքննության իրավունք...»

68. Կառավարությունն առարկել է այս փաստարկի դեմ: Նրանք պատճառաբանել են, որ դիմումատուները չեն սպառել ազգային միջոցները, քանի որ նրանք չեն բողոքարկել ենթադրյալ դրոշխությունը ոչ դատախազին և ոչ էլ դատարան:

69. Դիմումատուները չեն համաձայնվել, մատնանշելով, որ իրենք հայտարարություն են կատարել դրոշխության մասին առաջին ատյանի դատարանում վերաքննիչ դատարանում քննության ժամանակ: Նրանք հղում են կատարել դատական նիստերի արձանագրություններից և իրենց վերաքննիչ բողոքների պատճեններից, որոնք պարունակում են համապատասխան փաստարկներ:

## A. Ընդունելիություն

70. Հետազոտելով դիմումատուների կողմից ներկայացված փաստաթղթերը, Դատարանը գալիս է այն եզրակացության, որ դատաքննության արձանագրությունները և վերաքննիչ բողոքի փաստարկները պարունակում են բավարար հստակ և որոշակի մեղադրանքներ այն մասին, մեղսագրվող հանցագործությունները եղել են ոստիկանության կողմից դրոշխության հետևանք: Ավելին, փաստաթղթերից, ինչպես նաև հետագա դատավճիռներից պարզ է դառնում, որ այդ բողոքները ազգային դատարանների կողմից ընկալվել են որպես այդպիսին, սակայն մերժվել են: Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուների բողոքները ներկայացվել են այդ հարցերի լուծման իրավասությամբ օժտված դատարաններին:

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:

71. Այս առնչությամբ, կարելի է ենթադրել, որ Կառավարությունը դիմումատուներից ակնկալել է, որ նրանք մինչև, կամ ի հավելումն դատարանում դրոշխության հարց բարձրացնելուն, պետք է նույնատիպ բողոք ներկայացնեին նաև դատախազություն, ինչը Դատարանն անհրաժեշտ չի համարում իրավական պաշտպանության ազգային միջոցները սպառելու կանոնը պահպանելու առումով: Դատարանը հիշեցնում է, որ դիմումատուից, որը սպառել է իրավական պաշտպանության ազգային միջոցները, որոնք, ըստ երևույթին, արդյունավետ են և բավարար, չի կարելի պահանջել փորձել նաև այլ միջոցներ, որոնք, չնայած հասանելի են, սակայն այնքան էլ հավանական չէ, որ հաջողակ կլինեն(տես Ակուիլինան ընդդեմ Մալթայի` *Aquilina v. Malta* [GC], հա. 25642/94, § 39, ՄԻԵԴ 1999-III): Երբ մեկ իրավական պաշտպանության միջոց արդեն գործարկվել է, ապա, ըստ էության, նույնատիպ նպատակներ հետապնդող մեկ այլ միջոցի գործարկումն արդեն չի պահանջվում (տես Միկալեֆն ընդդեմ Մալթայի` *Micallef v. Malta* [GC], հա. 17056/06, § 58, 15 Հոկտեմբեր 2009): Սույն գործի հանգամանքներով Դատարանը գտնում է, որ դիմումատուները կատարել են ազգային իրավական միջոցների սպառման պահանջը, ինչպես նաև ցույց չի տրվել, որ դատախազին բողոքարկելը հաջողության հասնելու առավել լավ հեռանկար էր:

72. Հետևաբար, մերժում է Կառավարության առարկությունը ազգային իրավական պաշտպանության միջոցները սպառված չլինելու մասին:

73. Դատարանը նշում է, որ այս գանգատն ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 35 - § 3 (ա) իմաստով: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար՝ այն պետք է ճանաչվի ընդունելի:

## **B. ըստ էության**

### **1. Կողմերի դիրքորոշումները**

#### **(a) Կառավարությունը**

74. Կառավարությունը պնդել է, որ բոլոր երեք գործերով էլ վերահսկելի գնումը եղել է օրինական, որոնց ընթացքում ոստիկանության կողմից չի կատարվել սադրանք: Նրանք հաստատել են, որ յուրաքանչյուր դեպքում ոստիկանությունը հանձնարարել է կատարել ստուգողական գնում, հիմնվելով անկախ աղբյուրից ստացված տեղեկությունների վրա, մասնավորապես մասնավոր անհատների՝ X, Y եւ Z, ովքեր կամավոր բացահայտել են դիմումատուի քրեական գործունեությունը: Այս հիմքով նրանք համարում են, որ սույն գործը պետք է տարանջատվի Վանյան ընդդեմ Ռուսաստանի (թիվ 53203/99, 15 Դեկտեմբեր 2005 թ.) և Ռամանաուսկասի (մեջբերված վերևում) գործերից:

75. Դրուժինինի մասով Կառավարությունը նաև գտնում է, որ ի հավելում վերը հիշատակված մասնավոր անձանց կողմից ստացված տեղեկատվությանը, առկա է եղել նաև զեկույց՝ ներկայացված Թմրանյութերի Վերահսկողության Դաշնային Ծառայության պաշտոնյայի կողմից, որտեղ հղում է կատարվել մեկ այլ նախկին տեղեկատվության վրա՝ դիմումատուի կողմից թմրանյութերի վաճառքի մասին:

76. Ամեն դեպքում, նրանք պնդում են, որ ազգային օրենսդրության համաձայն տեղեկատվության մեկ աղբյուրը բավարար է վերահսկելի գնման իրականացման համար:



77. Բացի այդ, նրանք պնդել են, որ ոչ ոստիկանությունը և ոչ էլ գաղտնի օպերացիայում որպես գնորդ հանդես եկողները դիմումատուների վրա որևիցե ճնշում չեն գործադրել ստուգողական գնաման ընթացքում թմրանյութ վաճառելու նպատակով:

78. Կառավարությունը նաև նշել է, որ յուրաքանչյուր գործով պահպանվել են վերահսկելի գնման նկատմամբ գործող ընթացակարգային պահանջները: Նրանք պնդել են, որ խնդրո առարկա գաղտնի օպերացիաների իրականացման համար դատական թույլտվություն անհրաժեշտ չէր, քանի որ դրանք չեն ոտնձգում մարդու ընտանեկան կյանքի, հեռախոսային, փոստ հեռագրային և այլ հաղորդակցական միջոցների գաղտնիության սահմանադրական իրավունքը: Ուստի, բավարար էր վերահսկելի գնումների իրականացումը ոստիկանական բարձր պաշտոնյայի հանձնարարությամբ: Այնուհետև նրանք նշում են, որ վերահսկելի գնման արդյունքների օգտագործումը, որպես ապացույց օրինական է, դրանց վրա տարածվում են ապացույցների ընդունելիության վերաբերյալ կանոնները, դիմումատուների հայեցողության տակ է եղել դատական կարգով *inter alia* դրդչության հիմքով բողոքարկելու հնարավորությունը:

79. Ի վերջո, Կառավարությունը պնդում է, որ դիմումատուների բողոքը դրդչության վերաբերյալ քննվել է ազգային դատարանում: Վերահսկելի գնման վերաբերյալ բոլոր նյութերը բաց են եղել դատավարության բոլոր մասնակիցների համար և գործին առնչվող բոլոր վկաները խաչաձև հարցաքննության են ենթարկվել: Ուստի, դիմումատուների դատապարտումը թմրանյութերի վաճառքի համար եղել է արդար և օրինական:

**(b) Դիմումատուները**

80. Դիմումատուները պնդել են, որ իրենց գործերով իրականացված վերահսկելի գնումները չեն հետապնդել քրեական հանցագործությունների քննության նպատակ, քանի որ ոստիկանությունը բավարար հիմք չի ունեցել կասկածելու, որ իրենք ցանկանում են վաճառել թմրանյութ: Նրանք նշել են, որ իշխանությունները չեն տիրապետել որևիցե տեղեկատվության այն մասին, որ իրենք ներգրավված են թմրանյութերի վաճառքի մեջ, կամ էլ այդպիսի մտադրության մասին:

81. Դիմումատուներն իրենց կողմից ավելացրել են, որ մինչև վերահսկելի գնումը իրենք երբևիցե թմրանյութ ձեռք չեն բերել և երբևիցե չէին էլ անի, եթե ոստիկանությունը և նրանց իրազեկիչները իրենց չսաղորդեին: Ավելին, Վեսելովի և Դրուժինինի գործերով անձինք, ովքեր դիմումատուների մասին տեղեկություններ են հայտնել, հետագայում ցուցմունք են տվել այն մասին, որ մինչև նրանց մեղադրելը թմրանյութերի վաճառքով զբաղվելու մեջ, իրենք տեղեկություններ չեն ունեցել այն մասին, թե արդյոք վերջիններս երբևիցե թմրանյութ վաճառել են որևիցե մեկին թե ոչ: Ինչ վերաբերվում է Կառավարության կողմից կոնկրետ իր գործին վերաբերվող փաստարկին, Պարոն Դրուժինինն առարկել է, ասելով, որ ոստիկանական զեկույցը, որին հղում են կատարել, չի պարունակում որևիցե նախնական տեղեկատվություն, որը կարող էր հիմք հանդիսանալ կասկածելու, որ ինքը զբաղվում է թմրանյութերի առևտրով:

82. Ամեն դեպքում, երեք դիմումատուներն էլ բողոքարկում են Կառավարության պնդումն այն մասին, որ ոստիկանության համար տեղեկատվական աղբյուր են հանդիսացել մասնավոր անձինք, ովքեր կապ չունեն օպերատիվ-հետախուզական գործունեության հետ: Նրանք պնդել են, որ X-ը, Y-ը և Z-ը ոստիկանության հետ երկարատև աշխատող իրազեկողներ են, որոնք վերահսկելի գնումների ընթացքում պարբերաբար հանդես են եկել որպես գնորդներ: Ի

[Type text]

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:



ապացուցում իր փաստարկների, Պարոն Վեսելովը ներկայացրել է սույն գործի հետ կապ չունեցող դատավճիռների պատճեններ, որտեղ նույն աղբյուրը հանդես է եկել որպես գնորդ մեկ այլ վերահսկելի գնման ընթացքում: Պարոն Ջոլտոուիսինը նույնպես պնդել է, որ իր գործով աղբյուր հանդիսացողը համագործակցել է ոստիկանության հետ այլ գործերով, իր մասին տեղեկություններ հայտնելուց առնվազն վեց ամիս առաջ և այս հանգամանքը հաստատվել է առաջին աստիճանի դատարանում լսումների ժամանակ: Պարոն Դրուժինինը նաև պնդել է, որ իր գործով աղբյուրը սովորական մասնավոր անձ չէ, այլ ոստիկանական իրազեկիչ, և որ այդ փաստի մասին ինքն իբրև տեղեկացել է Թմրանյութերի Վերահսկման Դաշնային Ծառայությունում ուսուցանում անցնելիս:

83. Դիմումատուն նաև պնդում է, որ հետաքննող իշխանությունները չեն դրսևորել էապես պասիվ դիրք: Նրանք ոչինչ չեն ձեռնարկել համագործակցողների կողմից տրամադրված տեղեկատվությունը ստուգելու համար և հետաքննությունը սահմանափակել են միայն մեկ միջոցի գործադրմամբ՝ վերահսկելի գնում: Նրանք պնդում են, որ իշխանություններն իրենց վրա են վերցրել իրենց հետ կապվելու և իրազեկիչների միջոցով թմրամիջոցներ գտնելու համար իրենց համոզելու նախաձեռնությունը: Նրանք պնդում են, որ իրենք տեղի են տվել նրանց անդադար պնդումներին՝ հասկանալով, որ դա կատարում են որպես բացառություն և միայն մեկ անգամ:

84. Ավելին, նրանք պնդել են, որ վերահսկելի գնման թույլտվության նկատմամբ ֆորմալ պահանջների բացակայությունը և այն փաստը, որ դրանք պատշաճ ձևով չեն փաստաթղթավորվել, նրանց համար անհնարին են դարձրել ցույց տալը, իսկ ազգային դատարանի համար՝ հետագոտելը վերահսկելի գնման պատճառները, կամ էլ ոստիկանության աշխատակիցների և նրանց իրազեկիչների գործելակերպը:

85. Վերջապես, դիմումատուները նշել են, որ դատարանները պատշաճ ձևով չեն քննել իրենց մեղադրանքներն այն մասին, որ իրենց մեղսագրված հանցագործությունները կատարվել են ոստիկանության դրոշմային արդյունքում: Ամփոփելով, նրանք գալիս են այն եզրակացության, որ իրենց գործերով ողջ քրեական դատավարությունը հիմնված է սադրանքի վրա և խնդրո առարկա հանցագործությունները չէին կատարվի, եթե ոստիկանությունը չհրահրեր:

## 2. Դատարանի գնահատականը

### (a) Հիմնարար սկզբունքներ

86. Արդար դատական քննության երաշխիքներին վերաբերվող հիմնարար սկզբունքները, որոնք վերաբերվում են թմրանյութերի և կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով օգտագործվող գաղտնի քննչական գործողությունների տեխնիկային սահմանված են Դատարանի ծավալուն նախադեպային իրավունքով, որն ամփոփված է Բաննիկովան ընդդեմ Ռուսաստանի՝ *Bannikova v. Russia* (հա. 18757/06, §§ 33-65, 4 նոյեմբեր 2010). Ուղղակիորեն կիրառելի գործերը ներկայացված են ներքևում:

87. Չնայած Դատարանը ընդունում է գաղտնի գործակալների օգտագործումը, որպես օրինական քննչական տեխնիկա պայքարելու համար ծանր հանցագործությունների դեմ, այն պահանջում է, որպեսզի ապահովվեն համարժեք երաշխիքներ, քանի որ հանրային շահը չի կարող արդարացնել այնպիսի ապացույցների օգտագործումը, որոնք ձեռք են բերվել ոստիկանության կողմից հրահրելու միջոցով: (տես Տեիքսերիա Դե Կաստրոյի՝ *Teixeira de*

*Castro*, cited գործը վերևում, §§ 34-36): Մասնավորապես, Կոնվենցիան չի բացառում նախաքննության փուլում կամ պայմանավորված հանցագործության բնույթով, հինվելը այնպիսի աղբյուրների վրա, ինչպիսիք են օրինակ անանուն իրազեկիչները: Այնուամենայնիվ, նմանատիպ աղբյուրների պարբերաբար օգտագործումը գործն ըստ էության, լսող դատարանի կողմից դատավճիռ կայացնելիս այլ իրավիճակ է և ընդունելի է միայն այն դեպքում, երբ առկա են չարաշահումների դեմ համարժեք երաշխիքներ, մասնավորապես՝ հստակ և կանխատեսելի գործընթացներ խնդրո առարկա միջոցների թույլտվության, կիրառման և վերահսկողության համար (տես՝ *Խուդոբինն ընդդեմ Ռուսաստանի` Khudobin v. Russia*, հա. 59696/00, § 135, 26 հոկտեմբեր 2006, և Ռամանատուսկասի վերը նշված գործը, § 53):

88. Այն գործերով, որտեղ հիմնական ապացույցը ձեռք է բերվել գաղտնի օպերացիայի արդյունքում, ինչպիսին է թմրանյութերի ստուգողական գնումը, իշխանությունները պետք է ցույց տան, որ լուրջ շարժառիթներ են ունեցել գաղտնի օպերացիայի իրականացման համար: Մասնավորապես, նրանք պետք է տիրապետեն որոշակի և օբյեկտիվ տեղեկատվության, որը վկայում է այն մասին, որ կատարված են եղել նախնական գործողություններ այնպիսի հանցագործության կատարման նպատակով, որի համար դիմումատուն հետագայում դատապարտվել է (տես *Սեքուեյրավը ընդդեմ Պորտուգալիայի` Sequeirav. Portugal (dec.)*, հա. 73557/01, ՄԻԵԴ 2003-VI; *Eurofinacomv. France (dec.)*, no. 58753/00, ECHR 2004-VII; Շաննոն ընդդեմ Միացյալ Թագավորության՝ *Shannon v. the United Kingdom (dec.)*, հա. 67537/01, ՄԻԵԴ 2004-IV; վերը նշված Ռամանատուսկասը, §§ 63 և 64, և վերը նշված Մալինինասը, § 36): Դատարանը, մասնավորապես, նշել է, որ ցանկացած տեղեկատվություն, որի վրա հիմնվում են իշխանությունները, պետք է ստուգելի լինի: (տես Վանյանի վերը նշված գործը, § 49, և վերը նշված Խուդոբինի գործը, § 134):

89. Բոլոր դեպքերում, երբ իշխանությունները պնդում են, որ իրենք գործել են մասնավոր անձանց կողմից տրամադրած տեղեկատվության հիման վրա, դատարանը պետք է տարբերակի անհատական բողոքները ոստիկանության հետ համագործակցող անձի կամ իրազեկիչի հայտնած տեղեկությունից (տես վերը հիշատակված *Սեքուեյրայի* և Շաննոնի գործերը՝ *Sequeira and Shannon*, Մլինինն ընդդեմ *Լիտվայի` Miliniené v. Lithuania*, հա. 74355/01, §§ 37-38, 24 Հունիս 2008; վերը հիշատակված Մալինինասի գործը՝ *Malininas*, § 37, և Գորգիևսկին ընդդեմ «Նախկին Հարավսլավիա Մակեդոնիայի Հանրապետության» *Gorgievski v. "the former Yugoslav Republic of Macedonia"*, հա. 18002/02, §§ 52 և 53, 16 հուլիս 2009): Վերջինս իր մեջ ներառում է իր դերի սահմանազանցման էական ռիսկ վերածվելու պրովոկացիայի՝ agents provocateurs, Կոնվենցիայի 6-րդ Հոդվածի հավանական խախտմամբ, եթե դա կատարվել է ոստիկանության կողմից հսկվող օպերացիայի սահմաններում: Ուստի շատ էական է, որպեսզի յուրաքանչյուր գործով հաստատվի թե արդյոք քրեական հանցագործությունն արդեն սկսված է եղել այն ժամանակ, երբ աղբյուրը սկսել է իր համագործակցությունը ոստիկանության հետ (տես վերը հիշատակված *Sequeira and Eurofina com*):

90. Ավելին, ցանկացած գաղտնի օպերացիա պետք է համապատասխանի ցանկացած քննություն հիմնականում պասիվ կատարելու պահանջին: Այս կանոնը, մասնավորապես, բացառում է ցանկացած վարքագիծ, որը կարող է մեկնաբանվել որպես ճնշման գործադրում դիմումատուի վրա հանցագործության կատարելու նպատակով, օրինակ՝ իրենց նախաձեռնությամբ դիմումատուի հետ կապվելը, առաջարկը կրկնելը, չնայած նախնական

[Type text]

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:





մերժմանը, համառորեն դրդելը, միջինից բարձր գին առաջարկելը, կամ էլ դիմումատուի խղճահարությունը առաջացնելը, հիշեցնելով դուրս գալու ախտանիշը (տես ի թիվս այլ գործերի վերոհիշյալ Ռամանատուսկասի գործը, § 67; Վանյանի գործը, §§ 11 և 49, Մալինինասի գործը, § 37):

91. Դատարանը գտնում է, որ գաղտնի գործակալի օրինական ներդրման և հանցագործության դրդման միջև սահմանազատումը շատ հավանական է, որ խախտվի, եթե հատակ և կանխատեսելի գործընթացներ չեն սահմանվել ազգային օրենսդրությամբ գաղտնի օպերացիաների թույլտվության համար, առավել ևս, եթե բացակայում է դրանց նկատմամբ պատշաճ վերահսկողությունը: Մասնավորապես Ռուսաստանի դեմ գործերով նշվել է, որ ոչ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքը և ոչ էլ այլ ակտեր բավարար երաշխիքներ չեն ապահովում վերահսկելի գնման համար, ինչպես նաև նշել, որ անհրաժեշտ է սահմանել դատական կամ որևիցե այլ անկախ մարմնի կողմից թույլտվություն և վերահսկողություն (տես վերոհիշյալ Վանյանի, §§ 46 և 47; Խուդոբինի, § 135; և Բաննիկովի, §§ 49-50) գործերը:

92. Վերջապես, Դատարանը կարևորել է քրեական գործեր քննող ազգային Դատարանների դերը այնպիսի գործերով, որտեղ մեղադրյալը պնդում է, որ իրեն դրդել են հանցագործություն կատարելու: Դրդյության մասին ցանկացած վիճարկելի մեղադրանք դատարաններին պարտավորեցնում է քննելու այն, այնպիսի պայմաններում, որը հավասարազոր է արդար դատական քննությանը: Գործընթացը, որին հետևում են, պետք է լինի մրցակցային, համակողմանի, ամբողջական և համոզեցուցիչ դրդյության հանգամանքի վերաբերյալ, որտեղ մեղադրող կողմն է կրում հրահրման բացակայության ապացուցման պարտականությունը: (տես վերը հիշատակված Ռամանատուսկասի գործը, § 70). Դատական քննության շրջանակները պետք է գաղտնի օպերացիայի իրականացման պատճառները, ոստիկանության հանցագործությանը մասնակցության աստիճանը, և դիմումատուի նկատմամբ կիրառված ցանկացած սադրանքի կամ ճնշման բնույթը (*ibid*, § 71). Ինչ վերաբերվում է Ռուսաստանին, ապա, մասնավորապես Դատարանը գտել է, որ ազգային դատարաններն ունեցել են նման մեղադրանքը քննելու իրավասություն, մասնավորապես՝ ապացույցների անթույլատրելիության գործընթացի շրջանակներում (տես վերը հիշատակված խուդոբինի գործը, §§ 133-135):

### (b) Այս սկզբունքների կիրառումը սույն գործով

93. Մինչև երեք դիմումատուներից յուրաքանչյուրի անհատական հանգամանքների քննությանը անցնելը, Դատարանը կուրվագծի այն ընդհանուր նկատառումները, որոնք հատուկ են բոլորին: Այն նշում է, որ ինչ վերաբերվում է քրեական դատավարության արդարությանը, ապա դիմումատուն բողոքել է, որ վերահսկելի գնման վերաբերյալ հանձնարարությունը կամայական է եղել, իրենց կողմից քրեական գործունեության մասին նախնական տեղեկատվության բացակայության պայմաններում, և որ իշխանությունները հետաքննությունն իրականացրել են ոչ «ըստ էության պասիվ» եղանակով: Նրանք բոլորը բողոքել են, որ ոստիկանության համար իրենց գործերով տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ոստիկանության իրազեկիչները, այլ ոչ թե անկախ անհատները: Նրանք նաև բողոքել են գաղտնի գործողությունների անցկացման երաշխիքներ ապահովող նորմատիվ բազայի



բացակայությունից և պնդել, որ ներպետական դատարանները պատշաճ քննության չեն ենթարկել սադրանքի մասին իրենց բողոքը:

94. Այսպիսով, այս գործով հիմնական խնդիրը կայանում է նրանում, թե ինչ կերպ են իշխանություններն իրականացրել վերահսկվող գնումը: Դատարանը նշում է, որ չնայած երեք գաղտնի գործողությունների հիմքերը և պայմանները տարբերվում են, այնուամենայնիվ նրանք ունեն մի շարք նմանություններ: Մասնավորապես, ենթադրաբար հանձնարարությունը տրվել է բացառապես մասնավոր աղբյուրներից տեղեկատվության կամավոր տրամադրման հիման վրա, որոնք հետագայում վերահսկելի գնման ընթացքում գործել են որպես գնորդ: Ցուրաքանչյուր գործով տեղեկատվական աղբյուր հանդիսացող անձը հայտնի է եղել և վերջինս ցուցմունք է տվել դատարանում: Ոչ մի այլ չբացահայտված տեղեկատվություն որևիցե դեր չի կատարել ներազգային մակարդակով որոշում կայացնելիս, կամ էլ դատարանի կողմից գնահատման ժամանակ: Դիմումատուների և գաղտնի գործակալների միջև կնքված գործարքների հանգամանքները բավարար կերպով հաստատված են, որը կողմերը, ընդհանուր առմամբ, չեն վիճարկել: Հետևաբար, Դատարանը հնարավորություն ունի քննելու դիմումատուների բողոքը սադրանքի վերաբերյալ՝ տիրապետելով այն նույն նյութերին, որին տիրապետել են ազգային իշխանությունները: Ինչ վերաբերվում է բողոքների բնույթին և հիմքում ընկած փաստերին, ապա Դատարանը քննության կառնի, թե արդյոք դիմումատուները ոստիկանության կողմից ենթարկվել են սադրանքի, որն ըստ էության սադրանքի թեստի հիմնական հարցն է (տես վերը հիշատակված Բաննիկովայի գործը, §§ 37-50), թեև հետագա դատական քննությունը նույնպես հաշվի կառնվի:

95. Դատարանը, հետևաբար, կանցնի յուրաքանչյուր երեք վերահսկելի գնումներով իշխանությունների վարքագծի գնահատմանը:

*(i) Պարոն Վեսելովի գործով վերահսկելի գնումը*

96. Համաձայն ազգային իշխանությունների, այս վերահսկելի գնումը կատարվել է այն բանից հետո, երբ կամավորը տեղեկատվություն է ներկայացրել դիմումատուի քրեական վարքագծի մասին: Կառավարությունը ներկայացրել է այն, քանի որ այս հարցը ոստիկանության առջև բարձրացվել է անկախ աղբյուրի՝ անհատ անձ X-ի կողմից: Դիմումատուն առարկել է այդ բացատրության դեմ, պնդելով, որ X-ը աշխատել է ոստիկանության համար որպես իրազեկիչ և նախկինում մասնակցել է այլ վերահսկելի գնումների, որոնցից առնվազն չորսն ավարտվել են դատապարտմամբ: 97. Կողմերը համաձայնվել են, և դա նաև երևում է ազգային մակարդակով կայացված որոշումներից, որ ոստիկանությունն իր տիրապետման տակ ոչ մի տեղեկություն չի ունեցել դիմումատուի մասին մինչև X-ի կողմից նրա մասին 2009թ. մայիսի 19-ին իրազեկելը: Ավելին, համաձայն X-ի հարցաքննության, վերջինս երբևիցե դիմումատուից թմրամիջոց չի գնել, բացառությամբ վերահսկվող գնման ընթացքում ձեռքբերվածից: Կառավարությունն այնուամենայնիվ, համարել է, որ X-ի կողմից ոստիկանությանը տրամադրած տեղեկությունները բավարար հիմք են տալիս վերահսկվող գնման հանձնարարություն տալու համար և քննության չեն ենթարկում հանձնարարված գործողությունների խելամտությունը:

98. Դատարանը ուսումնասիրելով դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթային ապացույցները, գտնում է, որ դրանցով հաստատվում է X-ի ներգրավվածությունը

[Type text]

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:



նստիկանության կողմից կազմակերպված սույն գործի հետ կապ չունեցող վերահսկելի գնումներին և գտնում է, որ այն համոզեցուցիչ ձևով ցուցադրում է X-ի երկարատև համագործակցությունը հետաքննական մարմինների հետ:

99. Այն գտնում է, որ X-ի նստիկանական իրազեկիչ լինելու հանգամանքը առանձնացնում է այս գործը այն իրավիճակներից, որոնցում նստիկանությունը իրազեկվել է պարզապես միայն մասնավոր անձանց կողմից՝ այստեղ էական հանգամանք է հանդիսանում այն, որ արդեն սկսված քրեական հանցագործության մասին հայտնող աղբյուրը նստիկանության հետ համագործակցող անձ կամ իրազեկիչ չի եղել: Նմանատիպ իրավիճակների օրինակներ կարող են հանդիպել վերը հիշատակված Շանտնի գործում, որտեղ նստիկանությունը ստացել է թմրամիջոցների վաճառքի մասին փաստաթղթերի մի ողջ թղթապանակ՝ պատրաստված դիմումատուի կողմից, և Միլիներինի վերը հիշատակված գործը, որտեղ իշխանություններն անձից բողոք են ստացել այն մասին, որ դիմումատուն կաշառք է պահանջել: Երկու դեպքում էլ նստիկանությունը պարտավոր է եղել ստուգել արդեն իսկ սկսված հանցագործությունների մասին: Դատարանը գտել է, որ այս դեպքերում խնդրո առարկա քննչական տեխնիկայի օգտագործումը չի առնչվում նստիկանության կողմից հանցագործության հնարավոր դրդչության ռիսկի հետ, քանի որ ապահովվել են հստակ դատավարական երաշխիքներ:

100. Ինչ վերաբերվում է նստիկանական իրազեկիչների կամ նստիկանության հետ համագործակցող անձանց կողմից տրամադրված տեղեկություններին, ապա այստեղ կիրառելի են այլ մոտեցումներ: Դատարանը պահանջել է, որպեսզի պարզորոշ տարբերակումներ դրվեն որպես աղբյուր դրանց օգտագործման և նստիկանության կողմից հսկվող գաղտնի օպերացիաներին նրանց մասնակցության միջև: Դատարանը հետևողականորեն շեշտել է, որ նրանց դերը պետք է խստորեն պասիվ մնա, որպեսզի հանցագործության դրդչության չհագեցնի, ինչը շատ դժվար է ապահովել այն դեպքերում, երբ իրազեկիչը գործում է որպես գնորդ (ինչպես վերը հիշատակված Խուդոբինի գործում է § 134): Ուստի, քողարկված աշխատակցի կամ իրազեկիչի կողմից կատարված վերահսկելի գնումը պետք է հատկապես խստորեն հիմնավորված լինի, գործի թույլտվության տրամադրման խիստ կարգ, ինչպես նաև, պահանջվի, որպեսզի կիրառվի փաստաթղթավորման այնպիսի կարգ, որն ապահովի հետագայում կատարողների գործողությունների անկախ ստուգումը:

101. Ինչ վերաբերվում է թույլտվության գործընթացին, ապա Դատարանը նշում է, որ վերահսկելի գնումների թույլտվության և իրականացման վերաբերյալ Ռուսաստանում գործող կարգը ճանաչվել է ոչ լիարժեք, վերը հիշատակված Վանյանի, §§ 46 և 47 և Խուդոբինի, § 135 գործերով, որը մինչ այժմ փոփոխություն չի կրել: Չնայած 2007թ. կատարված փոփոխությունների համաձայն դրդչությունն ակնհայտորեն անօրինական է (տես վերևում՝ պարագրաֆ 44), սակայն գոյություն չունի այդ տերմինի բացատրությունը կամ մեկնաբանությունը տվող օրենսդրական կամ ընթացակարգային որևիցե փաստաթուղթ, կամ էլ պրակտիկ որևիցե ուղեցույց, որը կօգնի խուսափել դրանից:

102. Ինչպես վերը նշված գործերով, դիմումատուի նկատմամբ վերահսկելի գնում իրականացնելու մասին հանձնարարությունը կատարվել է պարզ վարչական որոշման կայացման ձևով այն մարմնի կողմից, որը հետագայում իրականացրել է այդ օպերացիան; որոշումը շատ քիչ տեղեկատվություն է պարունակում պլանավորված վերահսկվող գնման հիմքերի և նպատակների մասին, և այդ որոշումը քննության առարկա չի դարձել դատարանի

կողմից կամ ենթակա եղել որևիցե այլ անկախ վերահսկողության: Անհրաժեշտություն չի եղել հիմնավորելու որոշումը և հետևելու որևիցե ընթացակարգային կանոնների:

103. Դատարանը նշում է, որ նմանատիպ քննչական գործողությունները խստորեն կարգավորվում են այլ անդամ երկրներում: Արդարադատության համակարգերից մեծամասնություններում պահանջվում է վերահսկվող գնման կամ նմանատիպ այլ գաղտնի օպերացիաների անցկացման համար թույլտվություն դատարանի կամ դատախազի կողմից: Որոշ երկրներում, որտեղ դատարանը և դատախազը ներգրավված չեն թույլտվության տրամադրման գործում, որոշում կայացնող մարմինները միննույն է տարանջատված են այն մարմիններից, որոնք իրականացնում են այդ օպերացիաները: Ոստիկանությունը հիմնականում պարտականություն է կրում հիմնավորելու նմանատիպ միջոցների կիրառումը, որոշում կայացնող մարմնի առջև (տես պարագրաֆ 50 վերևում):

104. Հետևաբար, վերահսկելի գնման և այլ օպերատիվ միջոցառումների անցկացման ռուսական համակարգը, որն ամբողջության գտնվում է օպերատիվ-հետախուզական մարմինների իրավասության տակ, չի համապատասխանում անդամ երկրների մեծամասնության կողմից ընդունված պրակտիկային: Դատարանը գտնում է, որ այս թերությունը բացահայտում է սադրանքի կիրառման դեմ երաշխիքների ապահովման գործում ոստիկանության կողմից կառուցվածքային թերություններ:

105. Անդրադարձ կատարելով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը քննության կենթարկի, թե որքանով չնայած կառուցվածքային երաշխիքների բացակայությանը, ոստիկանությունը ուշադրության է արժանացրել X –ի իրազեկիչ լինելու հանգամանքը և հավաստիացել, որ նրա վարքագիծը չի սահմանազանցի օրինական ներդրման և հանցագործության դրդյալության միջև եղած սահմանները:

106. Դատարանը նշում է, որ ոստիկանությունը սկսել է վերահսկվող գնումն անմիջապես X-ի կողմից դիմումատուի մասին առաջին տեղեկությունները հայտնելուց հետո, առանց որևիցե փորձ անելու ստուգելու այդ տեղեկությունները, կամ էլ քննարկելու դիմումատուի ենթադրյալ հանցավոր վարքագիծն այլ միջոցներով հետաքննելու հնարավորությունը: Ի տարբերություն Բաննիկովայի գործով (վերը հիշատակված, § 69) վերահսկելի գնմանը նախորդել են մի շարք հետաքննչական քայլեր, հատկապես դատարանի թույլտվությամբ հեռախոսային խոսակցությունների ձայնագրումը, որով ապահովվել է դիմումատուի մոտ կանեփի վաճառելու մտադրության մասին իրեղեն ապացույցի առկայություն: Այդ ապացույցն այնուհետև ներկայացվել հրապարակային դատական քննության ընթացքում և մեծ ազդեցություն է ունեցել խնդրո առարկա գաղտնի օպերացիայի վերաբերյալ դատարանի գնահատման հարցում (ibid): Դատարանը սույն գործով եզրակացնում է, որ ոստիկանությունը ոչ միայն չի ջանացել լրացնել դատավարական երաշխիքների բացակայությունը, այլև անարդարացիորեն օգտվել է դրանից:

107. Այս առումով, Դատարանը հիշեցնում է, որ ինչ վերաբերվում է ապացուցման պարտականությանը, ապա այն կրում են իշխանությունները և նրան են պարտավոր ապացուցել, որ դրդյություն տեղի չի ունեցել, սակայն գործնականում գաղտնի օպերացիաների անցկացման համար պաշտոնական վերահսկողության և թույլտվության պահանջի բացակայության պայմաններում նրանք կարող են ազատվել այդ պարտականությունից (տես վերը հիշատակված Ռամանաուսկասի, § 70; Տեխսերիա Դե Կաստրոյի, § 38 և Բաննիկովայի գործերը, § 48):

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:

108. Սույն գործում ապացուցման պարտականությունից հնարավոր չէ ազատվել, քանի որ ոստիկանության գաղտնի գործողությունները դուրս են մնացել իշխանությունների վերահսկողությունից և գործի նյութերը բավարար փաստեր չեն պարունակում, որոնք հնարավորություն կտային դատարանին որոշում կայացնելու այդ առնչությամբ: Դատարանը, մասնավորապես, մատնանշում է ազգային վարույթով հաստատված այն փաստը, որ դիմումատուն X –ի հետ հաղորդակցվել է միջնորդի՝ “Ռուսլանի” միջոցով: Չնայած գաղտնի գործողություններում իր ունեցած դերին, այդ անձնավորությունը չի հարցաքննվել դիմումատուի դատավարության ընթացքում, հնարավոր է իշխանությունների կողմից նրա անձը ճշտելու անհնարինության պատճառով: Ուստի, ազգային գործընթացում պակասում է սադրանքի վերաբերյալ մեղադրանքի գնահատման համար կարևոր տարրը: Ավելին, “Ռուսլանի” X-ի հետ ունեցած հեռախոսային խոսակցության բովանդակությունը հաշվի չի առնվել, քանի որ այն չի ձայնագրվել: Բացի այդ, վերահսկելի գնման ընթացքում մասնակիցների խոսակցությունները, որոնք լսվել են ոստիկանության կողմից, չեն ձայնագրվել կամ որևիցե այլ կերպ գրանցվել: Դատարանի ուշադրությունից չի վրիպել, որ նման ձայնագրությունների համար անհրաժեշտ է դատարանի թույլտվությունը, սակայն գործի նյութերից չի երևում, որ վերահսկելի գնումը շտապ է կատարվել, կամ եղել են նման թույլտվության ձեռքբերման համար այլ խոչընդոտներ, չնայած ձեռք բերված ապացույցները կունենային ծանրակշիռ ապացուցողական արժեք դիմումատուի կողմից նախկինում քրեական հանցագործություն կատարելու որևիցե մտադրության գոյության գնահատման համար:

109. Դատարանը եզրակացնում է, որ սույն գործով վերահսկելի գնման ոչ ֆորմալ և ինքնաբուխ կատարման եղանակը պայմանավորված է եղել, մասնավորապես, նման գաղտնի օպերացիաների արդեն իսկ նշված համաչափ կարգավորման բացակայությամբ: Մի կողմից նմանատիպ գաղտնի օպերատիվ հետախուզական միջոցների օգտագործման պայմանները սահմանող օրենսդրության բացակայությունը հնարավորություն է ստեղծում չարաշահման համար, իսկ մյուս կողմից էլ այն ազատել է իշխանություններին իրենց գործողությունների խիստ պասիվությունը ապացուցելու պարտականությունից: Հաշվի առնելով այն փաստը, որ X-ը նախկինում եղել է ոստիկանության իրազեկիչ , ինչպես նաև դիմումատուի հետ նրա հանդիպման բնույթի վերաբերյալ որևիցե ապացույցի բացակայությունը, Դատարանը ենթադրում է, որ ոստիկանության կողմից իրապես տեղի է ունեցել սադրանք:

110. Վերջապես, Դատարանը նշում է, որ ազգային դատարաններն ուղղակիորեն մերժել են ըստ էության քննություն կատարել դիմումատուի նկատմամբ սադրանքի վերաբերյալ բողոքի շուրջ, մասնավորապես , երբ առաջին ատյանի դատարանը մերժել է X-ի նախկինում վերահսկելի գնումներին մասնակից լինելու վերաբերյալ ապացույցների հետազոտումը և չի թույլատրել նրա ենթադրյալ թմրամուլ լինելու և նախկինում թմրամիջոցների վաճառքի համար դատվածությունների մասին հարցերը: Սադրանքի վերաբերյալ դիմումատուի բողոքին չի անդրադարձել նաև վերաքննիչ դատարանը, չնայած վերջինս իր վերաքննիչ բողոքում այդ մասին մանրամասն և կոնկրետ անդրադարձել է : Մրանից հետևում է, որ դիմումատուի բողոքը սադրանքի մասին պատշաճ ուշադրության չի արժանացել ազգայի դատարանների կողմից:

111. Հաշվի առնելով վերոհիշյալ նկատառումները, Դատարանը եզրակացնում է, որ այս հանգամանքներն իրենց միասնությամբ խոչընդոտել են դիմումատուի նկատմամբ արդար դատական քննության իրականացմանը:

*(ii) Պարոն Ջոլտտուխինի գործով վերահսկելի գնումը*

112. Դատարանը մատնանշում է, որ սույն վերահսկվող գնումը, ինչպես և վերը նշվածը, պատվիրվել է բացառապես տիկին Y-ի՝ ենթադրյալ մասնավոր անձի կողմից ուստիկանությանը կամավոր կերպով դիմումատուի ենթադրյալ քրեական գործունեության մասին տեղեկություններ հայտնելու հիման վրա: Ինչպես և վերոշարադրյալ գործում, Y-ի որպես անկախ աղբյուրի հանդես գալը չի ապացուցվել: Ինչպես պարզ դարձավ դատական քննության ընթացքում, նա աշխատելիս է եղել որպես իրազեկիչ ուստիկանության այն աշխատակցի համար, որը դիմումատուի գործով իրականացրել է ստուգողական գնում, և որ նա նախկինում ևս մասնակցել է վերահսկելի գնումներին:

113. Դատարանն այնուհետև նշում է, որ Y-ն, ի տարբերություն X-ի, պնդել է, որ ինքը նախկինում դիմումատուից գնել է հերոին, ուստի և ընդունում է, որ ուստիկանությունը ունեցել է հիմքեր կասկածելու դիմումատուին թմրամիջոցների վաճառքի մեջ: Այնուամենայնիվ, պնդում է, որ պետք է տարբերակում կատարվի մասնավոր աղբյուրների և ուստիկանական իրազեկիչների միջև (տես՝ պարագրաֆ 101-102 վերևում) և գտնում է, որ նույն սկզբունքները կիրառելի են նաև այստեղ: Ինչ վերաբերվում է Y-ի կարգավիճակին որպես իրազեկիչ, ապա գաղտնի գործողություններին նրա մասնակցության համար պայման է հանդիսանում էապես պասիվ վարքագիծը:

114. Դատարանն, այսպիսով, անդրադառնում է այն հարցին թե արդյոք նրա և դիմումատուի հանդիպման եղանակն այնպիսին է եղել, որ ընդունակ է եղել հրահրելու քրեական հանցագործության կատարում: Նման հարցին, ինչպես պարոն Վեսելովի գործով, հնարավոր չէ պատասխանել, քանի որ Դատարանը քրեական գործի նյութերում չի գտել բավարար փաստեր վերջինիս վարքագծին գնահատական տալու համար: Դատարանը գտնում է, որ գաղտնի գործողությունների սկզբնական փուլից սկսած չի կատարվել ֆիքսում, երբ Y-ն ուստիկանության հանձնարարությամբ և հսկողության տակ զանգահարել է դիմումատուին և խնդրել իրեն վաճառել թմրամիջոցներ: Չնայած այն փաստին, որ հեռախոսային խոսակցությունը վերահսկելի գնման մաս է կազմել, այն չի ձայնագրվել որևիցե միջոցներով, այսպիսով անհնարին դարձնելով ստուգելը այն փաստը, թե արդյոք այդ պահին դիմումատուն կամավոր կերպով է առաջարկել իր ծառայությունները, կամ որևիցե այլ կերպ ցուցադրել հանցագործություն կատարելու իր նախնական մտադրությունը: Դատարանը նաև նշում է, որ ուստիկանությունը Y –ի կողմից դիմումատուի վերաբերյալ առաջին անգամ տեղեկություններ ստանալուն պես անմիջապես անցել է վերահսկելի գնման կատարմանը, առանց նույնիսկ փորձելու ճշտել այդ տեղեկությունները կամ որևիցե այլ ձևով կատարելու դիմումատուի ենթադրյալ քրեական գործողությունների հետաքննություն:

115. Դատարանը գտնում է, որ վերը նշված թերությունները հետևանք են գաղտնի գործողությունները կարգավորող նորմատիվ ակտերի բացակայության, որոնք ապահովում են երաշխիքներ, այնպես ինչպես պարոն Վեսելովի գործով (տես՝ պարագրաֆ 104-106 վերևում), և սա խանգարել է իշխանություններին իրականացնելու իրենց վրա դրված ապացուցման պարտականությունը՝ “էապես պասիվ” վարքագիծ դրսևորելու առումով: Ինչպես վերը նշված գործում, հաշվի առնելով Y-ի կարգավիճակը որպես ուստիկանական իրազեկիչ, գուգորդված դիմումատուի հետ նրա շփման բնույթի վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ, չի

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան Ներկայացուցչության օժանդակությամբ:

կարելի բացառել, որ Պարոն Ջոլտուխինը քրեական հանցագործություն է կատարել ոստիկանության կողմից իրականացված սադրանքի հետևանքով: .

116. Դատարանը հաջորդիվ գտնում է, որ ողջ դատական քննության ընթացքում դիմումատուն պնդել է, որ ինքը քրեական հանցագործություն է կատարել ոստիկանության կողմից իրականացված սադրանքի հետևանքով: Հետևաբար, ազգային դատարանները պարտավոր էին քննել սադրանքի մասով մեղադրանքը, ներառյալ մասնավորապես, այն պատճառները, որոնց հետևանքով սկսվել են գործողությունները, քրեական հանցագործությանը ոստիկանության մասնակցության աստիճանը, ինչպես նաև ցանկացած սադրանքի կամ ճնշման բնույթը, որին ենթարկվել է դիմումատուն (տես վերը նշված Ռամանատուսկասի գործը, § 71). Դատարանը նշում է, որ այս հարցերը առաջին դատարանի կողմից այնուամենայնիվ արժանացել են սահմանափակ ուշադրության, սակայն քննության չեն առնվել վերադասության կարգով գործի բոլոր դատական քննությունների ընթացքում, չնայած այդ մասին նշել է դիմումատուն իր բողոքներում: Այստեղից հետևում է, որ դիմումատուի բողոքը սադրանքի մասին պատշաճ քննության չի արժանացել ազգային դատարանների կողմից:

117. Հաշվի առնելով վերոհիշյալ նկատառումները, Դատարանը եզրակացնում է, որ սույն տարրերն իրենց համակցությամբ խախտել են դիմումատուի արդար դատաքննության իրավունքը:

*(iii) Վերահսկելի գնումը Պարոն Դրուժինինի գործով*

118. Դատարանը գտնում է, որ դիմումատուն մյուս երկուսի պես ենթադրում է, որ վերահսկելի գնման ընթացքում գնորդը՝ պարոն Z-ը, նույնպես եղել է ոստիկանական իրազեկիչ. Սակայն, ի տարբերություն վերը նշված երկու դիմումատուների, վերջինս չի կարողացել հիմնավորել իր ենթադրությունը: Դատարանն այսուհետև ընդունում է, որ վերջինիս գործով քննչական մարմինները Z -ին ընկալել են որպես մասնավոր աղբյուր: 119. Դատարանն այնուհետև նշում է, որ Z -ը մինչև վերահսկելի գնումը և նաև դատարանում երբեք չի նշել, որ ինքը դիմումատուից երբևիցե գնել է թմրանյութ: Ավելին, նա նշել է, որ որքանով իրեն է հայտնի, վերջինս այլ անձանց թմրանյութ չի վաճառել, ինչպես նաև համոզված է, որ նա դրանք չի արտադրել: Ոստիկանությունում նա նշել է, որ ինքը գրեթե համոզված է, որ կարող է վերջինիս համոզել իրեն թմրանյութեր վաճառել: Դատարանը նաև նշում է, որ ոստիկանությունն ընդունել է, որ իրենք դիմումատուի մասին որևիցե այլ տեղեկատվության չեն տիրապետել մինչև Z- ի կողմից կամավոր հայտնելը:

120. Կառավարությունը ներկայացրել է, որ ոստիկանությունը տիրապետել է դիմումատուին քրեական հանցագործության մեջ մեղսագրող այլ նախնական տեղեկությունների, որոնք ենթադրաբար ներկայացված են Թմրանյութերի վերահսկողության դաշնային ծառայության սպայի 2008 թ. սեպտեմբերի 4-ի զեկույցում: Սակայն, Դատարանը համաձայն է դիմումատուի հետ այն առումով, որ խնդրո առարկա զեկույցը վերաբերվում է Z-ի կողմից ներկայացված տեղեկատվությանը, այս առումով նմանատիպ մեկնաբանություն են տվել նաև ազգային դատարանները: Այդ պատճառով, Դատարանը չի կարող ընդունել, որ վերահսկելի գնումը կատարվել է որևիցե այլ հիմքով, քան Z -ի ներկայացրած տեղեկատվությունը: Հետևաբար, հետաքննչական մարմինները որևիցե բավարար պատճառ չեն ունեցել կասկածելու դիմումատուին թմրամիջոցների վաճառքի մեջ, գործի նյութերից պարզ է դառնում, որ նրանք

հրահանգել են կատարելու ստուգողական գնում՝ չնայած տեղյակ են եղել, որ հնարավոր է, որ դիմումատուն առաջին անգամ է թմրամիջոց վաճառում:

121. Դատարանը գտնում է, որ վերը նշված որոշումը չի կարող բնութագրվել որևիցե այլ կերպ, քան կամայական և դիտարկում է այն որպես գաղտնի գործողությունների անցկացման երաշխիքներ ապահովող կանոնների բացակայության ուղղակի հետևանք (տես՝ պարագրաֆ 104-106 վերևում): Այնպես, ինչպես վերը նշված երկու վերահսկելի գնումները, այս մեկը ևս հրահանգվել է այն վարչական մարմնի կողմից, որը նաև կատարել է այն: Նմանապես, գաղտնի գործողությունների նախնական փուլը չի ֆիքսվել, երբ Z-ը ոստիկանության հրահանգով և ներկայությամբ զանգահարել է դիմումատուին և խնդրել իրեն վաճառել թմրամիջոցներ, նրանց հեռախոսային ողջ խոսակցությունը չի ձայնագրվել: Նման բացթողնման հետևանքը, ինչպես նախորդ երկուսի դեպքում, եղել է այն, որ իշխանություններին չի հաջողվել ապացուցել դիմումատուի մոտ նախնական դիտավորության առկայությունը կատարելու հանցագործություն:

122. Ինչ վերաբերվում է դիմումատուի կողմից ներկայացված հանցագործության սադրանքի մեղադրանքի դատական քննությանը, Դատարանը գտնում է, որ առաջին աստիճանի դատարանն անուղղակիորեն մերժել է այդ մեղադրանքը, առանց որևէ գնահատական տալու, կամ նշելու, թե որն է իր եզրակացությունն այդ հարցում: Վերաքննիչ դատարանը սահմանափակել է իր քննությունն այս հարցի շուրջ՝ գտնելով, որ Z-ը նախկինում գնել է թմրամիջոցներ դիմումատուից, որն էլ հաստատում է վերջինիս մոտ նախնական դիտավորության առկայությունը: Այս հետևությունն այնուամենայնիվ, հակասում է Z-ի առաջին աստիճանի դատարանում տված ցուցմունքին և չի բխում առաջին աստիճանի կամ վերաքննիչ դատարանի կողմից հետազոտված որևիցե ապացույցից: Հետևաբար, Դատարանը գալիս է այն եզրակացության, որ ազգային դատարանը չի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները պարզելու, թե արդյոք տեղի է ունեցել սադրանք, չնայած նման պարտականություն ունեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով:

123. Դատարանը գտնում է, որ բոլոր այս հանգամանքները անդառնալիորեն խախտել են դիմումատուի նկատմամբ քրեական դատավարության արդարությունը:

*(iv) Դատարանի եզրակացության ամփոփումը*

124. Դատարանը գտնում է, որ դիմումատուի քրեական դատապարտումը թմրամիջոցների հետ կապված հանցագործության կատարման համար էապես հիմնված է ոստիկանության հսկողության տակ կատարված վերահսկելի գնման վրա: Տվյալ գործերից ոչ մեկով ոստիկանությունը չի ձեռնարկել այլ քննչական միջոցներ՝ ստուգելու համար, թե արդյոք կասկածյալները եղել են թմրամիջոց վաճառողներ: Գաղտնի գործողությունների արդյունքների վրա նման ուժեղ շեշտադրումը, ինչպես նաև դրանց ազդեցությունը քննության արդյունքների վրա ազգային իշխանություններին պարտավորեցնում է ապահովելու, որպեսզի վերահսկելի գնման վերաբերյալ որոշման ընդունումը և կատարումը բացառեն հնարավոր չարաշահումները և, մասնավորապես սադրանքը: Այնուամենայնիվ, Դատարանը եզրակացնում է, որ հնարավոր չէ սահմանել ոստիկանության պատասխանատվությունն իր աշխատակիցների և իրազեկիչների գործողությունների համար մեծամասամբ այն պատճառով, որ գոյություն ունեն համակարգային թերություններ, հատկապես՝ վերահսկելի գնումների

[Type text]

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:





կատարման թույլտվության կանխատեսելի և հստակ ընթացակարգերի բացակայությունը: Դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքն այն իմաստով, որ վերահսկելի գնման թույլտվության մասին որոշում կայացնելն այն վարչական մարմնի կողմից, որը նաև կատարում է այդ գործողությունը, առանց անկախ վերահսկողության և առանց հիմնավորման և ընթացակարգերին հետևելու անհրաժեշտության՝ սկզբունքորեն բավարար չէ (տե՛ս վերը նշված պարագրաֆ 103, 106, 117 և 123). Համեմատելով սույն պրակտիկան անդամ երկրներում գործող պրակտիկայի հետ, Դատարանը գտնում է, որ երկրների մեծամասնությունում վերահսկելի գնման և այլ գաղտնի գործողությունների կատարման համար գործում են մի շարք ընթացակարգային սահմանափակումներ (տե՛ս վերը նշված պարագրաֆ 105-106): Ի հակադրություն՝ Ռուսաստանում պետական օպերատիվ հետախուզական մարմիններն օժտված են պարտադրող հետաքննչական տեխնիկա գործադրելու իրավասությամբ, որն ըստ երևույթին, չարաշահումների դեմ համակարգային երաշխիքներ չի ապահովում:

125. Սույն գործի հանգամանքներից պարզ է դառնում, որ վերահսկելի գնման հանձնարարության գործընթացի անկատարության հետևանքով ռստիկանության կողմից դիմումատուն ենթարկվել է կամայական գործողությունների, որն էլ խոչընդոտել է նրա նկատմամբ քրեական դատավարության արդարությանը: Ներպետական դատարաններն էլ, իրենց հերթին, պատշաճ քննության չեն ենթարկել դիմումատուի բողոքը սադրանքի վերաբերյալ, մասնավորապես, չեն քննել վերահսկելի գնման պատճառները և ռստիկանության և նրա իրազեկիչների գործողությունները դիմումատուի նկատմամբ:

126. Ելնելով վերոշարադրյալից, Դատարանը գտնում է, որ բոլոր երեք դիմումատուների նկատմամբ քրեական դատավարությունները անհամատեղելի են եղել արդար դատաքննության հասկացության հետ: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

127. Վերջապես, պարոն Զոլտուխինը բողոք է ներկայացրել իրավական օգնության և որոշ վկաներին հարցաքննելու հնարավորության ենթադրյալ բացակայության վերաբերյալ: Նա հղում է կատարել Կոնվենցիայի 3, 4, 5 և 6 - րդ. Հոդվածների վրա: Դատարանը քննության է ենթարկել այդ բողոքները դիմումատուի կողմից ներկայացված ձևով: Այնուամենայնիվ, իր տիրապետության տակ գտնվող բոլոր նյութերից ելնելով, ինչպես նաև այնքանով, որքանով այդ հարցերը գտնվում են իր իրավասության տակ, Դատարանը գտնում է, որ դրանք չեն պարունակում Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների և ազատությունների խախտման որևէ ապացույց: Հետևաբար, բողոքի այս մասը ակնհայտորեն անհիմն է և ենթակա է մերժման համաձայն Կոնվենցիայի 35 - § 3 (ա) և 4 - րդ. Կետերի :



## IV. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ԲԴ ՀՈՂՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

128. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է .

“Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել”:

## A. Վնաս

129. Պարոն վեսելովը պահանջել է 50,000 Եվրո (EUR) որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Պարոն Ջոլոտուխինը որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում պահանջել է այնքան գումար, որքան կորոշի դատարանը: Պարոն Դրուժինինը պահանջել է 128,000 Եվրո (EUR) որպես ոչ նյութական վնաս, գումարած 73,200 Եվրո EUR որպես գույքային վնաս հինգ տարի ազատազրկման արդյունքում աշխատավարձի կորստի դիմաց՝ հաշվարկված 1,000 Եվրո որպես մեկ ամսվա աշխատավարձ, որը նա կաշխատեր, եթե չդատապարտվեր հանցագործության համար, որը ստեղծվել էր ոստիկանության կողմից:

130. Կառավարությունը համարում է, որ խախտման ճանաչումը, եթե Դատարանը այդպես գտնի, սույն գործով ինքնին կհանդիսանա բավարար և արդարացի փոխհատուցում: Նրանք վիճարկում են պարոն Վեսելովի և Պարոն Դրուժինինի պահանջները որպես ծայրահեղ և նմանատիպ ործերով Դատարանի կողմից սահմանված փոխհատուցումների սահմանը գերազանցող:

131. Դատարանը գտնում է, որ սույն գործով արդարացի փոխհատուցման սահմանումը պետք է հիմնված լինի այն փաստի վրա, որ դիմումատուների նկատմամբ չի կատարվել արդար դատաքննություն թմրանյութերի վաճառքի հետ կապված քրեական գործով, որը կատարվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտմամբ՝ ոստիկանության կողմից սադրանքի հետևանքով: Նրանք անհերքելիորեն հաստատեցին իրենց իրավունքների խախտման հետևանքով ոչ նյութական վնաս կրելու փաստը: Մակայն, պարոն Վեսելովի և Դրուժինինի պահանջած գումարներն ըստ երևույթին, չափազանցված են: Կատարելով իր գնահատումը և առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը սահմանում է երեք դիմումատուների համար յուրաքանչյուրին 3,000 Եվրո՝ EUR որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, գումարած այդ գումարից գանձվող ցանկացած հարկ:

132. Բացի այդ, Դատարանը հղում կատարելով իր կողմից հաստատված նախադեպային իրավունքին այն առումով, որ երբ դիմումատուին վնաս է պատճառվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման հետևանքով, ապա հնարավորության սահմաններում նրա համար պետք է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն, որպեսզի այդ դրույթների պահանջները չխախտվեն, և այդ նպատակով փոխհատուցման ամենանպատակահարմար ձևը սկզբունքորեն վարույթի վերսկսումն է, եթե այդպիսի պահանջ ներկայացվել է (տես՝ *mutatis mutandis, calan v. Turkey* [GC], no. 46221/99, § 210 *in fine*, ECHR 2005-IV; վերը նշված Մալինինասի գործը § 43; և Պորովն ընդդեմ Ռուսաստանի (*Popov v. Russia*,

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:

no. 26853/04, § 264, 13 հուլիսի, 2006թ.): Այս առումով, Դատարանը գտնում է, որ Ռուսաստանի Դաշնության Քրեական Դատավարության օրենսգրքի Հոդված 413-ը և Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական Դատավարության օրենսգրքի Հոդված 392-ը սահմանում են հիմքեր դատարանում գործի վերսկսման համար, այն դեպքում, երբ Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում, (տե՛ս վերևում, պարագրաֆ 49-ը):

133. Ինչ վերաբերում է Պարոն Դրուժինինի կողմից ներկայացված նյութական վնասի պահանջին, Դատարանը ցանկանում է շեշտել, որ այս գործով վնասների փոխհատուցման ճանաչումը կապված է այն հանգամանքի հետ, թե ինչ կարգով է կատարվել քննությունը և գտնում է, որ բացակայում է կապը այդ կարգի և պահանջված նյութական վնասի միջև:

134. Խախտման վերաբերյալ եզրակացությունից չի կարող եզրահանգում կատարվել դիմումատուի մեղավորության կամ անմեղության մասին: Այդ հանգամանքները պետք է գնահատվեն ազգային դատարանում վերսկսված քննության ընթացքում: Դատարանը գտնում է, որ եթե ազգային դատարանում վերսկսված քննության արդյունքում նրանք արդարացվեն, ապա կարող են պահանջել դատապարտման հետևանքով իրենց հասցրած գույքային և ոչ գույքային վնասի համար փոխհատուցում և այդպիսով, ազգային դատարանները կգտնվեն լավագույն պայմաններում նմանատիպ պահանջներին լուծում տալու համար:

## B. Ծախսեր և վճարներ

### 1. Պարոն Վեսելով

135. Դիմումատուն պահանջել է 35,000 ռուսական ռուբլի (RUB) վճարների և ծախսերի համար, որոնք կատարվել են ազգային դատարաններում և 120,000 ռուսական ռուբլի (RUB) Դատարանում կատարված ծախսերի և վճարների համար, 60,000 RUB իրավաբանի վճարը Դատարան դիմում ներկայացնելու համար և 60,000 Կառավարության նկատառումներին պատասխան ներկայացնելու համար: Նա ներառել է այդ վճարները հաստատող անդորրագրերը:

136. Կառավարությունը պատասխանել է, որ իրենք հիմքեր չեն տեսնում դիմումատուին փոխհատուցելու ազգային դատարաններում վճարների համար և բողոքարկել է Դատարանում քննության հետ կապված պահանջը, այն հիմքով, որ դիմումատուն չի հաստատել իր փաստաբանի the hourly rates:

137. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի, դիմումատուն ծախսերի եւ վճարումների փոխհատուցման իրավունք ունի միայն այնքանով, որքանով ցույց է տրվել, որ դրանք իրականում և անհրաժեշտաբար են տեղի ունեցել խելամիտ չափով: Հաշվի առնելով իր տիրապետության տակ գտնվող փաստաթղթերը, ինչպես նաև վերը շարադրված չափանիշները, Դատարանը պարոն Վեսելովի պահանջները բավարարում է ամբողջությամբ և սահմանում EUR4, 000՝ հոգալով բոլոր ծախսերը:



## 2. Պարոն Զոլոտուխին

138. Դիմումատուն բացատրել է, որ չի կարող պարզաբանել և հիմնավորել իր փոխհատուցման պահանջը, քանի որ կորցրել է բոլոր հիմնավորող փաստաթղթերը:

139. Կառավարությունը չի կատարել ոչ մի մեկնաբանություն:

140. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի, դիմումատուն իրավունք ունի ստանալ իր կրած ծախսերի և վճարների համար փոխհատուցում միայն այնքանով, որքանով ցույց է տվել, որ դրանք իրականում և անհրաժեշտաբար են տեղի ունեցել՝ խելամիտ չափով: Հաշվի առնելով փաստաթղթերի հանգամանքը, ինչպես նաև վերը նշված չափանիշը՝ Դատարանը չի սահմանում Պարոն Զոլոտուխինի համար որևիցե փոխհատուցում:

## 3. Պարոն Դրուժինին

141. Դիմումատուն պահանջել է 100,000 ռուբլի (RUB) դատարանում իր կրած ծախսերի և ծախքերի դիմաց: Նա ներկայացրել է իր փաստաբանի՝ Պարոն Տուչինի հետ կնքած ծառայությունների մատուցման մասին պայմանագրի պատճենը, որը պարունակում է առանձին նշում նախնական գանգատը ներկայացնելու համար վճարի վերաբերյալ (10,000 ռուբլի), փաստերի և գանգատի ամբողջական ներկայացման համար (26,000 ռուբլի), Կառավարության ներկայացրած առարկություններին պատասխանելու համար (60,000 ռուբլի) Դատարանի հետ հաղորդակցության համար (4,000 ռուբլի):

142. Կառավարությունը առարկել է այս պահանջի դեմ այն հիմքով, որ դիմումատուն չի նշել փաստաբանի մեկ ժամյա վճարի չափը:

143. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի, դիմումատուն իրավունք ունի ստանալ իր կրած ծախսերի և վճարների համար փոխհատուցում միայն այնքանով, որքանով ցույց է տվել, որ դրանք իրականում և անհրաժեշտաբար են տեղի ունեցել՝ խելամիտ չափով: Հաշվի առնելով իր տիրապետության տակ գտնվող փաստաթղթերը, ինչպես նաև վերը նշված չափանիշը՝ Դատարանն ամբողջովին բավարարում է Պարոն Դրուժինինի պահանջը և սահմանում որպես փոխհատուցում 2,600 Եվրո (EUR), որը ներառում է բոլոր ծախսերը:

## C. Բաց թողնված օգուտ

144. Դատարանը գտնում է, որ տոկոսադրույքները պետք է հաշվարկել Եվրոպական Կենտրոնական բանկի առավելագույն տոկոսադրույքի հիման վրա, որին անհրաժեշտ է ավելացնել երեք տոկոսադրույք:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Որոշում է միացնել դիմումները

[Type text]



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
Ներկայացուցչության օժանդակությամբ:

2. *Ճանաչում է* բողոքները այն մասով, որը վերաբերվում է դիմումատուների դատապարտմանը հանցագործությունների համար, որոնք հրահրվել էին ոստիկանության կողմից ընդունելի, իսկ մնացած մասերով՝ անընդունելի,
3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6 - րդ հոդվածի § 1 խախտում բոլոր երեք դիմումատուների նկատմամբ:
4. Վճռում է
  - (a) Պատասխանող Պետությունը պետք է վճարի դիմումատուին երեք ամսվա ընթացքում սկսած այն օրվանից, երբ վճիռը կմտնի օրինական ուժի մեջ, համաձայն կոնվենցիայի 44 հոդվածի § 2-ի հետևյալ գումարները, որոնք պետք է փոխակերպվեն ռուսական ռուբլու կարգավորման օրվա կուրսով
    - (i) Յուրաքանչյուր դիմումատուին 3,000 Եվրո (երեքը հազար Եվրո), գումարած ցանկացած հարկ, որը գանձվում է ոչ նյութական վնասի նկատմամբ;
    - (ii) Պարոն Վեսելովին 4,000 Եվրո (չորս հազար Եվրո), գումարած ցանկացած հարկ, որը կրող է գանձվել դիմումատուից, կապված ծախսերի և ծախքերի հետ;
    - (iii) Պարոն Դրուժինին 2,600 Եվրո (երկու հազար վեց հարյուր Եվրո), գումարած ցանկացած հրակ, որը կարող է գանձվել դիմումատուից կապված ծախսերի և ծախքերի հետ;
  - (b) that from the expiry of the above-mentioned three months until settlement simple interest shall be payable on the above amounts at a rate equal to the marginal lending rate of the European Central Bank during the default period plus three percentage points;
5. *Dismisses* the remainder of the applicants' claim for just satisfaction.

Done in English, and notified in writing on 2 October 2012, pursuant to Rule 77 §§ 2 and 3 of the Rules of Court.

Søren Nielsen  
Registrar

Nina Vajić  
President

